

**ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ**

**ԱՄՍԱԳԻՐՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ Է ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՑԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՀՀ ԿԳՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿՈՒՄ**

***Հրատարակվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի երաշխավորությամբ
Լրատվական գործունեություն իրականացնող՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, գրանցման
վկայական 03Ա085891՝ տրված 15.09.2009թ.***

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 29,
Էլեկտրոնային կայք՝ www.edupolice.am,
Էլեկտրոնային փոստ՝ orenqipatvarjournal@mail.ru,
Հեռ. 010-77-15-24

Համարի թողարկման պատասխանատու՝ պատասխանատու քարտուղար
Տ. Խաչատրյան:

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով
հեղինակների տեսակետներին:

**ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
"ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС ПОЛИЦИИ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ"**

"ЗАЩИТНИК ЗАКОНА" научно-методический журнал
*Издается по рекомендации Научного совета Образовательного
комплекса полиции Республики Армения*

ЖУРНАЛ РЕКОМЕНДОВАН ВЫСШИМ КВАЛИФИКАЦИОННЫМ КОМИТЕТОМ И ВКЛЮЧЕН В
ПЕРЕЧЕНЬ ВЕДУЩИХ РЕЦЕНЗИРУЕМЫХ НАУЧНЫХ ЖУРНАЛОВ И ИЗДАНИЙ, В КОТОРЫХ
ДОЛЖНЫ БЫТЬ ОПУБЛИКОВАНЫ ОСНОВНЫЕ НАУЧНЫЕ РЕЗУЛЬТАТЫ ДИССЕРТАЦИЙ НА
СОИСКАНИЕ УЧЕНЫХ СТЕПЕНЕЙ ДОКТОРА И КАНДИДАТА НАУК

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова 29

Официальный сайт: www.edupolice.am

Электронная почта: orenqipatvarjournal@mail.ru

Тел: 010-77-15-24

Ответственный за выпуск номера: ответственный секретарь Тигран Хачатрян

**FOUNDER AND PUBLISHER:
"POLICE EDUCATIONAL COMPLEX OF RA" STATE NON-PROFIT
ORGANIZATION**

"BULWARK OF LAW" scientific-methodical journal
**It is published with the warranty of the Scientific Council of the Police
Educational Complex of RA**

THE JOURNAL IS INCLUDED IN THE MAIN RESULTS AND FOR PUBLISHING THE THESIS IN RA'S
MINISTER OF EDUCATION AND SCIENCE HIGHER QUALIFICATION COMMITTEE'S IN THE
ACCEPTED SCIENTIFIC PUBLICATIONS LIST

Address: Yerevan 0004, Covakal Isakov Avenue 23,

Official web-cite: www.edupolice.am

Email: orenqipatvarjournal@mail.ru

Tel.: +374 10-77-15-24

Journal Issue Manager, Responsible Secretary T.Khachatryan

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ

Գլխավոր խմբագիր - ի.գ.թ. *Տիգրան Եսայան*,

Գլխավոր խմբագրի տեղակալ - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ *Արտակ Մնացականյան*,

Պատասխանատու քարտուղար - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժնի պետ, ոստիկանության կապիտան *Տիգրան Խաչատրյան*

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԻ ԱՆՈՒՍՆԵՐ՝

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ *Մանուկ Մուրադյան*,

ՀՀ ոստիկանության պետի գլխավոր խորհրդական, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. *Գրիգոր Բաղիրյան*,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ *Միսակ Մարկոսյան*,

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ. *Ռուսլան Մարանդյան*,

ՀՀ ոստիկանության ՀԿԼՎ պետ, ոստիկանության գնդապետ *Աշոտ Անարդյան*,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ *Գագիկ Գրիգորյան*,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ *Արտակ Հովհաննիսյան*,

ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր, ի.գ.դ., պրոֆեսոր *Աշոտ Խաչատրյան*,

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր *Սերգեյ Առաքելյան*,

ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.թ. *Հովհաննես Քոչարյան*,

ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, տ.գ.դ., պրոֆեսոր *Օլեգ Բուլգակով*,

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, ի.գ.թ., դոցենտ *Ալեքսանդր Պարադնիկով*,

ՌԴ ՆԳՆ Սանկտ Պետերբուրգի համալսարանի պետի գիտական աշխատանքների գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ., պրոֆեսոր *Մակսիմ Բախուն*,

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետական կառավարման տեսության և մեթոդոլոգիայի ամբիոնի պետի տեղակալ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, դոցենտ *Անդրեյ Անիսին*։

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор- кандидат юридических наук *Есаян Тигран Микаелович*,

Заместитель главного редактора- начальник учебно-методического управления Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции, кандидат юридических наук, доцент *Мнацаканян Артак Самвелович*

Ответственный секретарь - начальник отделов обеспечения качества образования и научной работы Образовательного комплекса полиции РА, капитан полиции *Хачатрян Тигран*

ЧЛЕНЫ РЕДАКЦИОННОГО СОВЕТА:

Начальник Образовательного комплекса полиции РА, полковник полиции, канд. юрид. наук, доцент *Манук Мурадян*,

Главный советник начальника Полиции РА, полковник полиции, д-р юрид. наук, *Григор Бадирян*,

Первый заместитель начальника Образовательного комплекса полиции РА, подполковник полиции, канд. юрид. наук, доцент *Мисак Маркосян*,

Начальник Юридического управления Полиции РА, подполковник полиции, канд. юрид. наук, *Руслан Марандян*,

Начальник Управления по связям с общественностью и СМИ Полиции РА, полковник полиции *Ашот Агаронян*,

Начальник Академии Образовательного комплекса полиции РА, полковник полиции, канд. юрид. наук, доцент *Гагик Григорян*,

Заместитель начальника Академии Образовательного комплекса полиции РА, полковник полиции, канд. юрид. наук, доцент *Артак Оганесян*,

Судья Конституционного суда РА, д-р юрид. наук, профессор *Ашот Хачатрян*,

Ректор Академии юстиции, д-р юрид. наук, профессор *Сергей Аракелян*,

Заслуженный юрист РА, канд. юрид. наук *Ованнес Кочарян*,

Первый заместитель начальника Краснодарского университета МВД РФ, генерал-майор полиции, д-р техн. наук, профессор *Олег Булгаков*,

Первый заместитель начальника Академии управления МВД РФ, генерал-майор полиции, канд. юрид. наук, доцент *Александр Парадников*,

Заместитель начальника по научной работе Санкт-Петербургского университета МВД РФ, полковник полиции, доктор юрид. наук, профессор *Максим Бавсун*,

Заместитель начальника кафедры теории и методологии государственного управления Академии управления МВД РФ, д-р философ. наук, доцент *Андрей Анисин*.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գևորգյան Արուսյակ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ7

Թադևոսյան Արման

ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 15

Թումասյան Դավիթ

ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻԳԻՆԳԻ ԿԱՍ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍՊՐՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ30

Լազարյան Արփի

ԱԶՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԻ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱԹԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ 46

Հակոբջանյան Վիկտորյա

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ61

Ղամբարյան Արթուր

ՑՈՒՑՄՈՒՆՔԻ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊՈՆԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ70

Մարգարյան Արզար

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՆՁԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱՐԳԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔ..... 86

Агузумцян Рубен Вазгенович, Амбарцумян Манук Вачикович, Габриелян Арменуи

Корюновна, Мамян Татевик Суреновна, Шахвердян Гаяне Давидовна
ИЗУЧЕНИЕ ТРАФФИКИНГА В КАЧЕСТВЕ НАСИЛИЯ ПРИ ПРОВЕДЕНИИ
СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКИХ ЭКСПЕРТИЗ..... 96

Бадальянц Элеонора Юрьевна

ТОРГОВЛЯ ЛЮДЬМИ: РЕТРОСПЕКТИВНЫЙ АНАЛИЗ И
УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА СОСТАВА ПРЕСТУПЛЕНИЯ 108

Гришин Андрей Владимирович, Данилова Кристина Геннадьевна

ВОПРОСЫ ПРИМЕНЕНИЯ ПРИНУЖДЕНИЯ ПРИ ПРОИЗВОДСТВЕ
СЛЕДСТВЕННЫХ ДЕЙСТВИЙ 115

Гукасян Армен Патваканович

КРИМИНОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА И МЕРЫ ПО
ПРЕДУПРЕЖДЕНИЮ ПРЕСТУПЛЕНИЙ, СВЯЗАННЫХ С
ТОРГОВЛЕЙ ЛЮДЬМИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ..... 130

Исраелян Геворг Воваевич

ТЕОРЕТИЧЕСКИЙ АНАЛИЗ ПРИЧИН И ПОСЛЕДСТВИЙ ЛАТЕНТНОСТИ
ТРАФИКИНГА 143

Мартыненко Наталия Эдуардовна, Мартыненко Эдуард Владимирович

УГОЛОВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА ПОХИЩЕНИЕ ЧЕЛОВЕКА И ТОРГОВЛЮ
ЛЮДЬМИ ПО УГОЛОВНОМУ КОДЕКСУ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ 150

Намнясева Виктория Вячеславовна, Жукова София Сергеевна

ВЛИЯНИЕ НОРМ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА НА РОССИЙСКОЕ
УГОЛОВНОЕ ЗАКОНОДАТЕЛЬСТВО, РЕГЛАМЕНТИРУЮЩЕЕ
ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА ТОРГОВЛЮ ЛЮДЬМИ 159

Пимакова Ольга Геннадьевна

ТОРГОВЛЯ ЛЮДЬМИ: КРИМИНОЛОГИЧЕСКИЙ АСПЕКТ 167

Проваторова Ксения Васильевна

К ВОПРОСУ О ТОРГОВЛЕ ЛЮДЬМИ 174

Савенко Ирина Алексеевна, Бикмашев Виталий Абдулхаевич

ОТДЕЛЬНЫЕ ВИДЫ СОУЧАСТИЯ ПРИ ТОРГОВЛЕ ЛЮДЬМИ ПО
ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И РОССИЙСКОЙ
ФЕДЕРАЦИИ..... 182

Сорокун Николай Сергеевич

АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ТОРГОВЛЮ
ЛЮДЬМИ В РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ..... 189

Shahnazaryan Norik

THE METHODS OF CONSTITUTIONAL REGULATION 197

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Գևորգյան Արուսյակ

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
կիրառական հոգեբանության ամբիոնի դասախոս*

Այսօր մեծ դեր ունեն կիրառական նշանակություն ունեցող գիտությունները, որոնք առաջացել են մի քանի գիտությունների կարևորագույն հայեցակետերի միավորումից: Այդպիսի օրինակ է իրավաբանական հոգեբանությունը, որն ուղղված է իրավապահ մարմինների գործունեության հոգեբանական կողմի ուսումնասիրությանը և որպես հոգեբանական գիտության կիրառական ճյուղ՝ իր կայացման ընթացքում Հայաստանում և Ռուսաստանում անցել է պատմական մի քանի կարևոր փուլեր:

Իրավաբանական հոգեբանության ստեղծման նախադրյալ է միջնադարի օրենքի պատժիչ համակարգը (պատիժ, ահաբեկում), որը լուսավորության դարաշրջանում առաջ քաշեց հասարակության բողոքը, և, հանցագործին ֆիզիկական և հոգեբանական բռնության ենթարկելու հետ մեկտեղ, առաջին անգամ (Ելնելով մարդասիրությունից) նրա հոգեբանությունը հասկանալու փորձեր արվեցին (Մ.Մ. Շերբատով, Ի.Տ. Պոստոլովա):

XIX դարի սկզբին առաջադեմ գիտնականները փորձում էին քրեական-իրավաբանական ուսմունքը հիմնավորել հոգեբանական գիտելիքներով (Վ.Կ.Ելպատսկի, Կ.Դ.Լոդիյ, Լ.Ս.Գորդիենկո և ուրիշներ): Դեմոկրատական հասարակության կազմավորման շրջանում տեղի ունեցավ ճորտատիրական իրավունքի վերացում (1861թ.), դատական (1864թ.) և ուղղիչ-պատժական (1879) բարեփոխումներ:

Այս փոփոխությունները պայմաններ ստեղծեցին իրավաբանական հոգեբանության ուսմունքի ավելի լայն կիրառման համար, քանի որ այն հասարակության սոցիալական պահանջն էր: Ռուսաստանում բարեփոխումների նախաշեմին տպագրվեցին դատաքննչական պրակտիկայում հոգեբանական գիտելիքների կիրառման վերաբերյալ մի շարք աշխատություններ, որոնցից են Ի.Ս.Բարշևի «Հայացք քննչական իրավագիտությանը» (1858թ.), Կ.Յա. Յանովիչ-Յաննսկի «Մտքեր քրեական դատավարության վերաբերյալ՝

հոգեբանության և ֆիզիոլոգիայի տեսակետից» աշխատությունը (1862թ.), Բ.Լ.Սպասովիչի «Քրեական իրավունք» (1863թ.), Ա.Ու.Ֆրեդեի «Ակնարկ դատական հոգեբանության վերաբերյալ» (1874թ.) աշխատությունները:¹

Այնուհետև (XIX դարի վերջ- XX սկիզբ) հանցագործի անձի ուսումնասիրման վերաբերյալ (Լ.Ե.Վլադիմիրովի, Գ.Ս.Ֆելդշտեյնի, Մ.Ն.Գերնետի, Գ.Գրոսսի, Լ.Ի.Պետրաժինցկու, Ի.Յա.Ֆոյնցկու, Դ.Ա.Դրլի, Դ.Դ.Բեզսոնովի աշխատությունները), վկաների (Ի.Ն. Խոմյակովի, Գ.Ռ.Պորտուգալովի, Օ.Վ.Գոլդովսկու, Ա.Ն.Բերբշտեյնի, Մ.Մ.Խոմյակովի, Մ.Պ.Բուխվալովի աշխատությունները), երդվյալների դատարանի (Ա.Ս.Բոբրիշև -Պուշկինի աշխատությունները), պատժիչ համակարգի վերաբերյալ (Ա.Յա. Գերդ, Ա.Ս. Բոգդանովսկի, Դ.Ա.Դրլի, Ա.Ֆ. Կիստյակովսկու, Դ.Ա.Տալբերգի, Մ.Պ. Բեկլեշևի, Դ.Վ.Կրասնսկու, Բ.Մ.Լևիտսկու, Ն.Ա.Օկունսկի, Պ.Ի.Ռովինսկու, Ն.Բ. և Կ.Վ.Բուկավշնիկով եղբայրների, Մ.Ն.Կապուստինի, Ա.Դ.Ուշինսկու և այլոց աշխատությունները) հետազոտությունների միջոցով հանցագործությունների կանխմանը վերաբերող կիրառական խնդիրներ լուծելիս հոգեբանական, հոգեբուժական, իրավական գիտելիքների հետ համատեղ (կոմպլեքսային) կիրառման և դրանց զարգացման շնորհիվ իրավաբանական հոգեբանությունը ձևավորվում է որպես գիտության առանձին ճյուղ:

Միննույն ժամանակ, կատարվում է հետազոտությունների նոր մեթոդների առաջադրում և գործնական ստուգում, ծագում են առաջադեմ գիտնականների (Ի.Ս.Սեչենև, Կ.Դ.Կավելին, Վ.Ս.Բեխտերև, Վ.Պ.Սերբսկի, Պ.Ի.Կովալևսկի, Ս.Ս.Կորսակով, Ա.Ֆ.Կոնի և այլն) գիտական երկխոսություններ:²

Պետք է նշել, որ հետհեղափոխական շրջանի Ռուսաստանում սկսեցին մեծ ուշադրություն դարձնել իրավախախտումների կանխարգելմանը, օրինականության և արդարադատության իրականացմանը (1925թ. կազմավորվեց հանցագործի և հանցագործության հետազոտման պետական ինստիտուտ, 1927թ. Մոսկովյան նահանգական դատախազությանը կից ստեղծվեց փորձարարական հոգեբանության լաբորատորիա՝ Ա.Ռ. Լուրիեի ղեկավարությամբ), մեծ արագությամբ սկսեց զարգանալ դատահոգեբանական փորձաքննության (ԴՀՓ) կիրառումը (Ա.Ե.Բրուսիլովսկի, Ե.Կ.Կրասնուշկին):

¹ **Васильев В.Л.** Юридическая психология. 6-е изд. — СПб.: Питер, 2009 — 68 с.

² **Михайлова О.Ю.** Агрессия и сексуальное поведение // Прикладная психология. — 2000. — № 6. — С. 16—24.

Հետագայում ԴՀՓ-ի կիրառումը կասկածի տակ դրվեց, և մինչև 1960-ական թվականների կեսերն իրավաբանական հոգեբանությունը, մասնավորապես հոգեբանական փորձարարական գործունեությունը, բացասական արձագանքներ էր ստանում, և դա կապված էր այն բանի հետ, որ փորձագետ հոգեբանը «ոտնձգություն էր կատարում» իրավաբանի գործունեության շրջանակներին վրա՝ որոշելով մեղադրյալի (հանցագործի) մեղքը:³

Իրավաբանական հոգեբանության վերածնունդը կատարվեց 1964թ., երբ ՄՄԿԿ ԿԿ-ն ընդունեց «Երկրում իրավաբանական գիտության հետագա զարգացման և իրավաբանական կրթության բարելավման միջոցառումների մասին» որոշումը: Ըստ այս որոշման՝ իրավաբանական հոգեբանությունն իրավաբանների մասնագիտական (պրոֆեսիոնալ) պատրաստման պարտադիր տարրերից մեկն էր, իսկ 1971թ. Անցկացվեց «Դատական հոգեբանության արդի խնդիրները» թեմայով համամիութենական գիտական, կիրառական համաժողով, որից հետո ուղղիչ դաստիարակչական գաղութներում ստեղծվեց հոգեբանի պաշտոնը, ԽՍՀՄ ՆԳՆ Ակադեմիայում ստեղծվեց իրավաբանական հոգեբանության առաջին ամբիոնը՝ պրոֆեսոր Ա.Պ. Կրակովսկու ղեկավարությամբ, Ռյազանում ԽՍՀՄ ՆԳՆ բարձրագույն դպրոցում ստեղծվեց ուղղիչ-աշխատանքային մանկավարժության և հոգեբանության ամբիոնը՝ Ի.Ի.Կուլպովի ղեկավարությամբ: Ինչ վերաբերում է իրավաբանական հոգեբանության հետագա զարգացմանը՝ պետք է նշել, որ 1990-ական թվականներին ՆԳՆ-ում ստեղծվում է հոգեբանական ծառայությունների միասնական համակարգ: Տարեցտարի, ընդունելով իրավաբանական հոգեբանության անհրաժեշտությունը, հաստիքային պաշտոններ են բացվում գերատեսչություններում և նախարարություններում:

Ինչպես նշում է Վ.Լ. Վասիլևը. «Իրավաբանական հոգեբանությունն ինքնուրույն գիտական ճյուղ (դիսցիպլին) է, որի ուշադրության կենտրոնում են անձի և իրավունքի՝ որպես մեկ համակարգի տարրերի փոխհամաձայնության խնդիրները»: Նշված ոլորտը ներառում է իր մեջ մի քանի ուղղություններ (ենթաճյուղեր), որոնք բարենպաստ հենակետ են իրավական նորմերը կյանքի կոչելու համար:

Վերլուծելով զանազան հայեցակարգեր և տեսություններ՝ իրավաբանական հոգեբանության մեջ կարելի է առանձնացնել հետևյալ ուղղությունները.

³ **Васильев В.Л.** Юридическая психология. 6-е изд. — СПб.: Питер, 2009 — 68 с.

1. Իրավական հոգեբանություն (իր մեջ ներառում է իրավագիտակցության, իրավական մշակույթի, իրավական սոցիալականացման և այլ հոգեբանական խնդիրները),
2. Քաղաքացիա-իրավական կարգավորման հոգեբանական ասպեկտները (մարդկանց փոխհարաբերությունների հոգեբանությունը քաղաքացի-իրավունք ոլորտում, քաղաքացիական գործընթացի հոգեբանական ասպեկտները),
3. Իրավաբանական հոգեբանության գործունեություն (իր մեջ ներառում է դատական հոգեբանություն, իրավաբանի մասնագիտական (պրոֆեսիոնալ) գործունեության հոգեբանություն),
4. Քրեական հոգեբանություն (հանցագործության կատարման հոգեբանություն, տուժողի հոգեբանություն, հանցագործի անձի հոգեբանություն),
5. Դատահոգեբանական փորձաքննություն և այլն:

Իսկ հիմնական մեթոդները, որ կիրառում է իրավաբանական հոգեբանությունը, իրենց մեջ ներառում են.

1) գիտական հետազոտության մեթոդներ (դիտումը, գիտափորձը, անամնեստիկ մեթոդը, քրեական գործին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրումն ու վերլուծումը, անհատական-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումը (թեստավորում, հարցում, անկետավորում, զրույց),

2) Անձի վրա հոգեբանական ներգործության մեթոդները (համոզումը, ներշնչումը),

3) դատահոգեբանական փորձաքննության մեթոդները (փորձաքննվողի վիճակի և հոգեբանական գործընթացների վերականգնման մեթոդները, անհատների ճանաչողական առանձնահատկությունների, հոգեզգացմունքային կարգավիճակի ուսումնասիրումը):⁴

Իրավաբանական հոգեբանության ուղղությունների տեսական մշակումը և նրանց գործնական կիրառումն այսօր շատ կարևոր խնդիր է: Անցկացնելով գրական աղբյուրների վերլուծություն (վերջին տարիների գիտաժողովների նյութերը, թեմատիկ ամսագրերը, իրավաբանական հոգեբանությ-

⁴ Михайлова О.Ю., Целиковский С.Б. Судебно-психологическая экспертиза личности серийных сексуальных преступников. — М.: КРЕДО, 2008. — 254 с.

յան վերաբերյալ գրված թեկնածուական աշխատանքները՝ վստահաբար կարելի է ասել, որ իրավաբանական հոգեբանության մեջ տեղ գտած խնդիրներից առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն հարցերը, որոնք կապված են:⁵⁶⁷⁸

- պատժողական համակարգի հետ (դատապարտվածի անձի առանձնահատկությունների, օրինաչափությունների ուսումնասիրությունը Օ.Գ.Անանև, Պ.Օ.Բելկոն, Ե.Վ.Վասկե, Ա.Մ.Վելիկոցկայա, Ա.Մ.Դուշկին, Մ.Մ.Կալաշնիկովա, Ա.Ա.Կոնոպ, Ի.Ի.Կուպցով, Վ.Մ.Լիտվիշկով, Ա.Բ.Միտկինա, Մ.Դ.Խաչատուրյան, Ս.Ա.Խուդոկոնենկո և այլն), քրեա-կատարողական համակարգի աշխատակցի անձի առանձնահատկությունների ուսումնասիրությունը (Մ.Վ.Բրեժնև, Ա.Ս.Դուշկին, Ե.Ա.Եվստաֆենա, Կ.Վ.Կրյակլին, Ն.Վ.Լուկյանչենկո, Ա.Վ.Մոլոստով, Ա.Բ.Նապրիս, Ա.Ի.Պապկին, Բ.Մ.Պոզդնյակով, Մ.Բ.Պրյախինա, Օ.Ա.Ռոժկով, Վ.Վ.Սոլոդնիկով, Ն.Ն.Տավտիլովա, Մ.Ս.Տարասիկով և ուրիշներ),
- իրավաբանական աշխատանքների հոգեբանության հետ (անձնային-հոգեբանական բնութագրերի, վարքի առանձնահատկությունների, արդարության զգացման, իրավապահ մարմինների աշխատակիցների իրավական վարքի, դատական համակարգի հետազոտումը (Ի.Ա.Վասիլև, Ե.Վ.Վասկե, Ե.Ե.Գավրինա, Ա.Վ.Կլոպովա, Ե.Լ.Կոստոչկո, Տ.Բ.Մալցևա, Ա.Դ.Նազարով, Ն.Պ.Պիրիլովա, Վ.Ա.Ռոզոչև, Ա.Վ.Սոմով, Վ.Ա.Սոսին)),
- քրեական հոգեբանության հետ (հանցագործի քրեածին, դրդապատճառների առանձնահատկությունները, հանցավոր վարքի հոգեբանական մեխանիզմը, ահաբեկչության հոգեբանական ասպեկտների

⁵ Электронный журнал «Психологическая наука и образование». Архив — [Электронный ресурс] — Режим доступа. — URL: <http://www.psyedu.ru/journal/archive.phtml> (дата обращения 05.10.2014).

⁶ Темы диссертаций и авторефератов по специальности «Юридическая психология», ВАК РФ 19.00.06 — [Электронный ресурс] — Режим доступа. — URL: <http://www.dissercat.com/catalog/psikhologicheskije-nauki/yuridicheskaya-psikhologiya> (дата обращения 10.10.2014).

⁷ Статьи по юридической психологии — [Электронный ресурс] — Режим доступа. — URL: <http://psyjournals.ru/topic/urpsy/index.shtml> (дата обращения 18.10.2014).

⁸ **Поздняков В.М.** Юридическая психология: генезис и перспективы // Прикладная юридическая психология. — 2010. — № 2. — С. 15—37.

ուսումնասիրումը (Ի.Դ.Աբիդուլևա, Ա.Ի.Բելկին, Ա.Ա.Բիչկովա, Վ.Ս.Գրաչև, Ա.Յա.Գրիշկո, Վ.Ա.Եմելին, Ս.Ն.Ենիկոլոպով, Գ.Պ.Իվանով, Ի.Ա.Կրիվենկո, Մ.Ի. Մարյին, Օ.Յու.Միխայլով, Ա.Ս.Նայդենով, Ա.Ն.Պոստոլենյա, Ռ.Ա.Ռոմաշով, Վ.Յու.Ռիբնիկով, Ի.Ս.Սոկոլով, Վ.Ա.Սոսնին, Օ.Վ.Ստարիկով, Ս.Բ.Ցելիկովսկի, Ժ.Չ.Ցուցիևա, Ե.Ա.Շիշկինա և ուրիշներ)),

- դատահոգեբանական փորձաքննության և ստի դետեկտոր (полиграфология) (Մ.Վ.Զեյգեր, Ռ.Ս.Իվանով, Յու.Բ.Կոմիսարովա, Բ.Յու.Նեկլյուտով, Բ.Ա.Պոլյանսկայա, Ֆ.Ս.Սաֆուանով, Դ.Ա.Ստեպանենկո, Յու.Ի.Խոլոդնի և ուրիշներ):

Հայաստանում ևս իրավաբանական հոգեբանության զարգացմանը նպաստել են հայ հետազոտողների մի շարք աշխատություններ: Դրանցից են Դ. Ս. Ամիրյանի «Իրավաբանական հոգեբանություն»⁹ ուսումնական դասընթացը, Ս. Արզումանյանի, Է. Գրինի «Իրավաբանական հոգեբանություն»¹⁰ հիմնարար աշխատանքը, որն առաջին բուհական դասագիրքն է և հարուստ նյութ է պարունակում ընդհանուր, սոցիալական և իրավաբանական հոգեբանությունից: Դասագրքում հանգամանորեն քննարկվում են իրավաբանական հոգեբանության տեսամեթոդական հիմունքները, սոցալատաբանության, քրեադատավարության, դատական փորձաքննության, փաստաբանական, քրեակատարողական (պենիտենցիար) գործունեության հոգեբանական հիմնախնդիրները: Հատկանշական են նաև Է. Գրինի «Հոգեբանությունը իրավապահ գործունեությունում»¹¹, «Փաստաբանական գործունեության հոգեբանություն»¹², «Դատահոգեբանական փորձաքննությունը քրեական և քաղաքական դատավարությունում»¹³ աշխատությունները: Ս.Արզումանյանի, Ս.Մկրտչյանի, Վ. Սարգսյանի «Իրավաբանական հոգե-

⁹ Դ. Ս. Ամիրյանի Իրավաբանական հոգեբանություն | Դասընթացի ուսումնական ծրագիր, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 28 էջ

¹⁰ Արզումանյան Ս., Գրին Է., Իրավաբանական հոգեբանություն, Եր., 2004, 432էջ:

¹¹ Գրին Է., Հոգեբանությունը իրավապահ գործունեությունում, Եր., Զանգակ-97, 2007, 144 էջ:

¹² Գրին Է., Փաստաբանական գործունեության հոգեբանություն, Երևան, Զանգակ, 2001, 60էջ:

¹³ Գրին Է., Դատահոգեբանական փորձաքննությունը քրեական և քաղաքական դատավարությունում, Երևան, 2002, 72էջ:

բանության պրակտիկում»¹⁴աշխատությունը: Որպես վերջաբան՝ պետք է փաստել, որ իրավաբանական հոգեբանությունը և նրա արդի վիճակը պահանջում են հիմնական դրույթների տեսության և դրանց գործնական կիրառման հետագա զարգացում ոչ միայն ՌԴ-ում, այլև ՀՀ-ում: Այս փուլում կարևոր է որոշակիացնել և ստեղծել իրավաբանական հոգեբանության հետ առնչվող բոլոր հարակից գիտությունների ընդհանուր հասկացությունների շտեմարան:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ЮРИДИЧЕСКОЙ ПСИХОЛОГИИ

Геворгян Арусяк Геворговна

*Преподаватель кафедры прикладной
психологии Армянского государственного
педагогического университета имени Х.Абовяна*

Статья посвящена этапам развития юридической психологии и актуальным проблемам. Анализируются и выделяются историографические периоды становления юридической психологии, современные направления, их проблемы, цели и методологическая основа. Особое внимание уделено современному состоянию и перспективам развития юридической психологии.

Ключевые слова: Юридическая психология, право, судебная психология, уголовное право, правонарушение.

¹⁴ Ս.Արզումանյան, Ս.Մկրտչյան, Վ. Սարգսյան, Իրավաբանական հոգեբանության պրակտիկում, Ե. 2002:

DEVELOPMENT TRENDS IN LEGAL PSYCHOLOGY

Gevorgyan Arusyak

*Lecturer at the Chair of Applied Psychology,
Armenian State Pedagogical University
after Kh. Abovyan*

The article is devoted to the development stages of legal psychology and current issues. The historiographical periods of the formation of legal psychology, modern trends, problems, goals, and methodological basis are analyzed and distinguished. Special attention is paid to the current state and prospective development of legal psychology.

Key words. Legal psychology, law, forensic psychology, criminal law, offense.

Հոդվածը գրախոսվել է՝ 08.10.2022թ.
Ներկայացվել է տպագրության՝ 17.10.2022թ.

ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԷՈՒԹՅՈՒՆԸ. ՏԵՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թաղևոսյան Արման

ՀՀ վարչապետի աշխատակազմի

իրավաբանական վարչության գլխավոր իրավաբան,

ՀՀ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի անդամ,

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի

իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

Ժողովրդաիշխանությունը բավականին ընդգրկուն հասկացություն է և լինելով ինքնուրույն գիտական եզրույթ՝ այն իր մեջ ներառում է փիլիսոփայական, քաղաքական և իրավական գաղափարներ:

Ժողովրդաիշխանությունը ձևակերպումների որոշակի առանձնահատկություններով բովանդակվում է աշխարհի բազում երկրների սահմանադրություններում¹: Կան երկրներ, որոնց հիմնական օրենքներում ժողովրդաիշխանության փոխարեն օգտագործվում է ժողովրդի կամ ազգի ինքիշխանություն արտահայտությունը²: Ձևակերպումների նման բազմազանությունը պայմանավորված է նրանով, որ «Ժողովրդաիշխանություն» հասկա-

¹ Constitution of Belgium, Article 15, էլ. նեսուրս՝

https://constituteproject.org/constitution/Belgium_1831?lang=en, հղումն ըստ 11.01.2022թ.,

Constitution of the Federal Republic of Germany, Article 20, էլ. նեսուրս՝

https://constituteproject.org/constitution/German_Federal_Republic_2014?lang=en, հղումն ըստ 11.01.2022թ.,

Constitution of Greece, Article 1, էլ. նեսուրս՝

https://constituteproject.org/constitution/Greece_2008?lang=en, հղումն ըստ 11.01.2022թ.,

Constitution of Ireland, Article 6, էլ. նեսուրս՝

https://constituteproject.org/constitution/Ireland_2019?lang=en, հղումն ըստ 11.01.2022թ.

² Constitution of the Russian Federation, Article 3, էլ. նեսուրս՝

https://constituteproject.org/constitution/Russia_2014?lang=en, հղումն ըստ 11.01.2022թ.,

Constitution of the Italian Republic, Article 1, էլ. նեսուրս՝

https://constituteproject.org/constitution/Italy_2020?lang=en, հղումն ըստ 11.01.2022թ.,

Constitution of the Portuguese Republic, Article 3,

https://constituteproject.org/constitution/Portugal_2005?lang=en, հղումն ըստ 11.01.2022թ.,

Constitution of Spain, Article 1, էլ. նեսուրս՝

https://constituteproject.org/constitution/Spain_2011?lang=en, հղումն ըստ 11.01.2022թ.

ցությունը չափազանց ընդարձակ է իր բովանդակությամբ և խայտաբղետ դրսևորման ձևերով, ուստի դժվար է տալ դրա միասնական սահմանումը:

Անդրադառնալով «Ժողովրդաիշխանություն» հասկացության հիմնախնդրին՝ հարկ է ուսումնասիրել այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են «Ժողովուրդ», «իշխանություն», «Ժողովրդական ինքնիշխանություն» հասկացությունները և դրանց հարաբերակցությունն այլ եզրույթների հետ:

Սովետական միության ժամանակաշրջանում ընդունված էր «Ժողովուրդ» հասկացության մարքս-լենինյան մոտեցումը, որի համաձայն ժողովուրդն ընկալվում էր որպես աշխատավորների ամբողջություն: 1936 թվականի ԽՍՀՄ Սահմանադրությունն ամրագրում էր, որ «ամբողջ իշխանությունը պատկանում է քաղաքների և գյուղերի աշխատավորներին՝ ի դեմս աշխատավորների պատգամավորների խորհուրդների»³: Նման ձևակերպում էր պարունակում նաև ՀԽՍՀ 1937թ. Սահմանադրությունը⁴:

Ժամանակի նշանավոր գիտնականներից Ա.Ի. Լեպյոշկինը նշում է. «Ժողովուրդ եզրույթի ներքո հասկացվում է մարդկանց որոշակի պատմական ընդհանրություն, որը փոփոխվում է՝ կախված կոնկրետ ժամանակաշրջանում հասարակության կողմից լուծվող զարգացման խնդիրներից: Դրան համապատասխան՝ ժողովուրդը կարող է կազմված լինել միայն աշխատավորներից կամ իր մեջ ներառել այն սոցիալական շերտերը, որոնք ևս օբյեկտիվորեն մասնակցում են պետության դինամիկ զարգացման խնդիրների լուծմանը»⁵: Այս բնորոշումն ուներ խիստ ընդգծված դասակարգային բնույթ և ծառայում էր որպես իրավական և փաստական հիմք՝ քաղաքացիների առանձին խմբերի իրավունքների և ազատությունների սահմանափակման համար:

«Ժողովուրդ» հասկացությունը ժամանակակից մասնագիտական գրականության մեջ բնորոշվում է որպես պետության քաղաքացիների ամբողջություն⁶: Դրա հետ մեկտեղ, առկա են նաև այս հասկացության ընկալումները լայն և նեղ առումներով: Լայն առումով «Ժողովուրդ» հասկացությունը նույնացվում է «քաղաքացիներ» հասկացության հետ, որոնք իրենց ամբողջ-

³ ԽՍՀՄ Սահմանադրություն, ընդ. 1936 թվականի դեկտեմբերի 5, հոդված 3

⁴ ՀԽՍՀ Սահմանադրություն, ընդ. 1922 թվականի փետրվարի 3, հոդված 1

⁵ Лепешкин А. И., Советское государственное право, Москва, 1971, С. 103

⁶ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդ. խմբագրությամբ Գ.Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, 2010, էջ 56

ջությամբ պատկանում են որևէ կոնկրետ պետությանը: Իսկ նեղ առումով «ժողովուրդ» հասկացությունն ընկալվում է որպես ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ամբողջություն⁷:

Մեզ համար առավել ընդունելի է «ժողովուրդ» հասկացության ընկալումը լայն առումով, քանի որ նպատակահարմար չէ դրա կազմից քաղաքացիների այնպիսի կատեգորիաների բացառումը, ինչպիսիք են, օրինակ, անչափահասները, անգործունակ քաղաքացիները կամ ընտրական իրավունք չունեցող այլ քաղաքացիները: Թեև նրանք չեն օգտվում որոշակի քաղաքական իրավունքներից, այնուամենայնիվ, այդպիսով նրանք չեն դադարում լինել ժողովրդի մի մասը: Բացի դրանից, «էլեկտորատ» հասկացությունը չի կարելի նույնացնել «ժողովուրդ» հասկացության հետ՝ այն պարզ պատճառով, որ պետության և քաղաքացու միջև առկա հարաբերությունները չեն սահմանափակվում միայն քաղաքական բնույթ ունեցող հարաբերություններով: Սոցիալական, տնտեսական, հոգևոր-մշակութային ոլորտները ևս կարևոր են մարդու ինքնարտահայտման, ինքնաիրացման համար:

Զարգացած երկրների սահմանադրական իրավունքի տեսություններում «ժողովուրդ» հասկացությունը նույնացվում է «ազգ» հասկացության հետ⁸: Հայրենական գրականության մեջ «ժողովուրդ» հասկացությունը դիտարկվում է որպես «ազգ» հասկացության հոմանիշ՝ քաղաքական իմաստով⁹: Սակայն պետք է նշել, որ այս երկու հասկացությունների հարաբերակցության հիմնախնդիրը մինչ օրս լուծված չէ և չունի միանշանակ պատասխան: Եթե ժողովուրդը քաղաքացիների ամբողջությունն է, ապա ազգը «մարդկանց պատմականորեն առաջացած հանրություն է, որը բնորոշվում է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և մշակույթի մեջ դրսևորվող հոգեկան կերտվածքի ընդհանրությամբ»¹⁰:

Ընդհանրապես, այս երկու՝ «ժողովուրդ» և «ազգ» հասկացությունների բնորոշումից երևում է, որ նրանց միջև ընդհանրություններ (տարածքային, տնտեսական կապեր) շատ կան, սակայն կան նաև տարբերություններ:

⁷ Прело М., Конституционное право Франции, перевод Ф.А. Кублицкого, под ред. А.З. Манфреда, Москва, 1957, С. 375

⁸ Баглай М.В., Конституционное право Российской Федерации, Москва, 2007, С. 122

⁹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդ. խմբագրությամբ Գ.Գ. Հարությունյանի, Ս. Վաղարշյանի, Երևան, 2010, էջ 56

¹⁰ Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 5, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1969, էջ 7

Մասնավորապես, ժողովուրդը կարող է լինել բազմազգ, որոնք միմյանցից տարբերվում են մշակույթով, լեզվով, ազգային այլ առանձնահատկություններով, ուստի բազմազգ պետություններում, կարծում ենք, «ժողովուրդ» և «ազգ» հասկացությունները նույնացնել չի կարելի: Այդպիսի նույնացումը կարող է հիմնավոր լինել միայն միազգի պետություններում:

«Ժամանակակից պետականագետները և իրավաբանները հանգում են այն մտքին, որ պետության հիմքը հենց «ժողովուրդն» է, որն ընկալվում է որպես պետության քաղաքացիների ամբողջություն»¹¹: Դրա հետ մեկտեղ՝ քաղաքացիները կարող են պատկանել տարբեր ազգերի, ունենալ տարբեր ազգություններ:

Կարևոր է նաև «իշխանություն» հասկացության մեկնաբանումը, քանի որ հենց դա է նպաստում առանձին անհատների կազմակերպմանը որպես ժողովուրդ, հասարակություն:

Իշխանության բովանդակությունը լայնորեն քննության է առնվել ռուսական¹², խորհրդային դպրոցի ներկայացուցիչների¹³ և հետխորհրդային շրջանի բազմաթիվ հայրենական և արտասահմանյան հետազոտողների կողմից¹⁴: Սովետական իրավաբանական գրականության մեջ իշխանությունը դիտվում էր որպես մեկ սուբյեկտի գերակայությունը մեկ այլ սուբյեկտի նկատմամբ: Իշխանության մասին այդպիսի պատկերացումը համապատասխանում էր մարքս-լենինյան տեսության հիմնական գաղափարներին:

«Իշխանությունը հատուկ կամային հարաբերություն է՝ հարկադրման, իրավունքի, հեղինակության և այլ միջոցներով մարդկանց վրա որոշակի

¹¹ **Мамут Л.С.**, Народ в правовом государстве, Москва, 1999, С. 27

¹² **Коркунов Н.М.**, Русское государственное право, часть особенная, Том 2-ой, Санкт Петербург, 1905, С. 8-39, **Коркунов Н.М.**, Лекции по общей теории права, Санкт-Петербург, 1909, С. 241-246, **Кокошкин Ф.Ф.**, Русское государственное право, Москва, 1908, С. 48-49, 52-63, **Кокошкин Ф.Ф.**, Лекции по общему государственному праву, Москва, 1912, С. 189-192 և ուրիշներ

¹³ **Кейзеров Н.М.**, О соотношении понятий “социальная” и ”политическая” власть, Вестник ЛГУ, 1966, номер 5-ый, **Тихомиров Ю.А.**, Власть и управление в социалистическом обществе, Москва, 1968, **Королев А.И.**, **Мушкин А.Е.**, Государство и власть, Правоведение, 1963, номер 2-ой, **Григорян Л.А.**, Народовластие в СССР, Москва, 1972 և ուրիշներ

¹⁴ **Жискар Д'Эстен**, Власть и жизнь (перевод с франц.), Москва, Международные отношения, 1990, **Никольский С.А.**, Власть и земля, Москва, 1990, **Абдулатипов Р.Г.**, Власть и совесть, Москва, Славянский диалог, 1994, Социология и власть (под ред. **Л.Н. Москвичева**), Москва, 1997, **Այվազյան Ն.Ս.**, Մահմանադրության էությունը և բովանդակությունը, Երևան, 2005, էջ 75-84 և ուրիշներ

ազդեցություն գործելու՝ հասարակական արտադրությունը կազմակերպելու և տարբեր բնույթի փոխհարաբերություններ կարգավորելու համար»:¹⁵

Իշխանությունը հնարավորություն է կառավարելու ինչ-որ մեկին կամ որևէ բան ենթարկելու սեփական կամքին: Իշխանությունը սոցիալական երևույթ է: Այն ծագում է հասարակության ծագման հետ մեկտեղ և գոյություն ունի ցանկացած հասարակության մեջ, քանի որ վերջինս կարիք ունի կառավարման¹⁶:

Պետք է նշել, որ «իշխանություն» հասկացության վերաբերյալ հեղինակների կարծիքները հիմնականում համընկնում են: Մասնավորապես, իշխանությունը ներկայացվում է որպես հնարավորություն՝ սեփական կամքին ենթարկելու, կառավարելու կամ տնօրինելու այլ մարդկանց գործողությունները:

Սակայն իշխանությունը բազմազան և բազմակողմ է ու չի ենթադրում միայն պետական իշխանություն: Յուրաքանչյուր ժողովրդավարական պետության և հասարակության համար առավել կարևոր և ուրույն տեղ է զբաղեցնում ժողովրդի իշխանությունը:

«Իշխանություն» հասկացության, և ընդհանրապես, ժողովրդաիշխանության ուսումնասիրության համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև մեկ այլ կարևոր հիմնահարցի:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում սահմանվում է շատ կարևոր հիմնադրույթ. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ խնդրո առարկա հոդվածը, մարդուն, նրա արժանապատվությունը հռչակելով որպես բարձրագույն արժեք, միաժամանակ ամրագրում է հետևյալը. «2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: 3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Այս հիմնադրույթներից բխում է, որ գործ ունենք իշխանության մեկ այլ տեսակի՝ հանրային իշխանության հետ:

¹⁵ Խաչատրյան Բ.Ա., Հայրապետյան Ս.Ս., Քաղաքագիտություն, Երևան, 2000, էջ 109

¹⁶ Վարդանյան Ռ.Հ., Իշխանությունների բաժանման և հավասարակշռման հայեցակարգի պատմատեսական և իրավական վերլուծություն, Երևան, 2015, էջ 117

Վերոգրյալի համատեքստում արդարացիորեն հարց է ծագում, թե ի՞նչ է իրենից ներկայացնում հանրային իշխանությունը: Այս հարցն առավել արդիական է դառնում այն առումով, որ նախորդ՝ 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը «հանրային իշխանություն» եզրույթի փոխարեն օգտագործում էր «պետություն» եզրույթը:

Անդրադառնալով տեսական մոտեցումներին՝ հարկ է փաստել, որ սովետական շրջանի մտածողները հանրային իշխանությունը դիտարկում էին նեղ ասպեկտով և վերջինս նույնացնում էին պետական իշխանության հետ: Պետության և իրավունքի տեսության մեջ հանրային իշխանությունը հաճախ դիտարկվում է որպես ցանկացած պետության կարևորագույն հատկանիշ և նույնացվում է քաղաքական (պետական) իշխանության հետ: Այդ իշխանությունն իրականացվում է «անմիջականորեն պետության կողմից կամ պատվիրակված է նրա կողմից, այսինքն՝ իրականացվում է նրա անունից, նրա լիազորությամբ և աջակցությամբ»:¹⁷ Հանրային իշխանության նման ըմբռնում կար խորհրդային շրջանում, երբ պետության շահերը վեր էին հասարակության շահերից: Այդ շրջանում իշխանությունը ժողովրդին միայն ֆորմալ առումով էր պատկանում, իսկ իրականում իշխանությունը պատկանում էր պետական մարմիններին:¹⁸ Այսպիսով, գոյություն ունեւր միայն մեկ իշխանություն՝ պետական:

Ա.Գ. Վաղարշյանը նշում է. «Սահմանադրությունը հանրային իշխանության իրականացումը վստահել է ժողովրդին (դրա ձևերն են ընտրությունները և հանրաքվեն), ինչպես նաև՝ հանրային մարմիններին ու պաշտոնատար անձանց՝ ըստ իրենց սահմանադրական իրավասության»:¹⁹

Ներկա փուլում հանրային իշխանության վերաբերյալ մոտեցումներն էականորեն տարբերվում են, և մի շարք հեղինակներ պետական իշխա-

¹⁷ Теория государства и права: Курс лекций, под ред. Н.И. Матузова, А.В. Малько. 2-е изд., перераб. и доп., Москва, 2008, С. 42

¹⁸ **Авакьян С.А.** Публичная власть: конституционно-правовые аспекты, Вестник тюменского государственного университета, 2009, номер 2-ой, С. 5.

¹⁹ **Վաղարշյան Ա.Գ.**, Ժողովրդի իշխանության դեմ հնարավոր ոտնձգությունները և ՀՀ իրավունքի համակարգում դրանց ամրագրման հիմնախնդիրները, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2019, համար 2 (29), էջ 3-16

նության հետ մեկտեղ որպես հանրային իշխանություն են դիտարկում նաև տեղական ինքնակառավարումը և ժողովրդի իշխանությունը²⁰:

Մենք համակարծիք ենք վերոգրյալ մոտեցում ունեցող հեղինակների հետ և կարծում ենք, որ ժողովրդաիշխանության տարատեսակ ինստիտուտների միջոցով ժողովուրդն իրապես կյանքի է կոչում իր իշխանությունը՝ այդպիսով ազդեցություն գործելով հենց պետական իշխանության վրա: Սակայն այս պնդմամբ խոսքը պետական իշխանության և ժողովրդի իշխանության տարանջատման մասին չէ, այլ մենք այն դիտարկում ենք որպես համագործակցային մեխանիզմ վերջիններիս միջև:

Այստեղ հարկ է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ մարդը, լինելով հասարակական էակ, ապրելով սոցիումում, կամա թե ակամա ենթարկվում է որոշակի ազդեցության, երբեմն նաև՝ յուրատեսակ հարկադրանքի, որոնք էլ, ինչպես արդեն վերը նշեցինք, իշխանության էական բնութագրիչներն են: Այս ամենը դրսևորվում է նաև պետական իշխանություն-անհատ, մունիցիպալ իշխանություն-անհատ փոխհարաբերությունների պարագայում:

Այս համատեքստում ժողովրդի իշխանությունը դիտարկելով որպես հանրային իշխանության տեսակ՝ կարծում ենք, որ, ինչպես պետական և մունիցիպալ իշխանությունը, այն ևս չի կարող լինել ինքնանպատակ և պետք է սահմանափակված լինի մարդու՝ որպես բարձրագույն արժեքի հիմնական իրավունքներով և ազատություններով, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով: Այս մոտեցումը պատշաճ հակալեզիք և յուրատեսակ սահմանափակող գործոն կարող է լինել նաև Սահմանադրության մեկնաբանություններում տեղ գտած այն դիրքորոշմանը՝ հա-

²⁰ Современные проблемы организации публичной власти, коллективная монография, рук. авт. кол. и отв. ред. **С.А. Авакьян**, Москва, 2014, С. 59, **Маркунин Р.С.**, Система юридической ответственности органов публичной власти: постановка проблемы, Юридическая наука, 2015, номер 4-ый, С. 14, **Хабриева Т.Я.**, Национальные интересы и законодательные приоритеты России, Журнал российского права, 2005, номер 12-ый, С. 19-29, **Кандрина Н.А.**, Публичная власть в современной российской государственности, Известия Алтайского государственного университета, номер 3-ий, 2016, С. 94-95, **Авакьян С.А.**, Публичная власть: конституционно-правовые аспекты, Вестник тюменского государственного университета. 2009, номер 2-ой, С. 5

մաձայն որի «ժողովուրդն իրավագոր է կատարելու այն ամենը, ինչն ուղղակիորեն չի արգելված Սահմանադրությամբ»²¹:

Ժողովրդաիշխանության հասկացության բացահայտման տեսանկյունից հասկանալի է «ժողովրդաիշխանություն» և «ժողովրդավարություն» հասկացությունների հարաբերակցության հարցը, որոնք շատ հաճախ կիրառվում են որպես հոմանիշներ: Այսպիսի մոտեցմանն է նպաստում այն հանգամանքը, որ դեմոկրատիա (ժողովրդավարություն) տերմինը հին հունարենից թարգմանվում է որպես ժողովրդի իշխանություն՝ «դեմոս»՝ ժողովուրդ և «կրատոս»՝ իշխանություն բառերից:

Վ.Ե. Գուլիև և Ֆ.Մ. Ռուդինսկին կարծում էին, որ «ժողովրդավարությունը բառի բուն իմաստով ժողովրդաիշխանություն է, քանի որ ժողովուրդը բաղկացած է առանձին մարդկանցից, և ժողովրդի իշխանությունը ենթադրում է նրանցից յուրաքանչյուրի ներգրավում դրա իրականացմանը»²²:

Այս երկու հասկացությունների նույնության թեզն էր պաշտպանում նաև գերմանացի գիտնական Տ. Մաունցը, որը նշում էր, որ ժողովրդավարությունը բնորոշում է այն, որ ժողովուրդը՝ որպես ամբողջություն, մասնակցում է պետության ձևավորմանը և, ընդ որում, որպես գործող մարմին՝ հանդես է գալիս անմիջականորեն՝ ընտրությունների և քվեարկությունների միջոցով, իսկ միջնորդավորված՝ ներկայացուցչական մարմինների միջոցով²³:

Մեր դիտարկմամբ հայրենական սահմանադրաիրավական դիսկուսիայում առավել ընդունելի պետք է համարել այն պնդումը, որ ժողովրդաիշխանությունը ժողովրդավարության՝ որպես մեր հանրապետության սահմանադրական բնութագրիչի արտահայտությունն է:

Ինչպես արդարացիորեն նշում է Վ.Վ. Կոմարովան՝ պետության ժողովրդավարությունն իր արտահայտությունն է գտնում ժողովրդաիշխանության երաշխավորման մեջ: Ժողովրդավարական պետությունը պարտավոր է ստեղծել անհրաժեշտ իրավական մեխանիզմներ ժողովրդաիշխան-

²¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդ. խմբագրությամբ **Գ.Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**, Երևան, 2010, էջ 57

²² **Бялкина Т. М.**, Реализация конституционного принципа народовластия в системе местного самоуправления Российской Федерации, Конституционное и муниципальное право, 2013, номер 1-ый, С. 60-64

²³ **Маунц Т.**, Государственное право России (ФРГ и ГДР), Москва, 1959, С. 114

նության իրացման համար²⁴: Չնայած դրան՝ ժողովրդաիշխանությունը ժողովրդավարության բովանդակության միակ տարրը չէ. այն ընդամենն այդ բարդ համակարգի տարրերից մեկն է, որի բաղկացուցիչները մշտական փոխգործակցության մեջ են: Ժողովրդաիշխանության հետ մեկտեղ՝ ժողովրդավարությունն իր արտահայտությունն է գտնում նաև քաղաքական բազմազանության, տեղական ինքնակառավարման և անձի ազատության մեջ՝ գրում է Օ.Ե. Կուտաֆին²⁵:

Համաձայն ենք Յու.Լ. Շուլժենկոյի այն տեսակետի հետ՝ ըստ որի ժողովրդավարական է այն պետությունը, որում մի կողմից իրացվում է ժողովրդաիշխանության սկզբունքը, այսինքն՝ իրական իշխանությունը պատկանում է ժողովրդին, իսկ մյուս կողմից՝ մարդու իրավունքներն ու ազատությունները, որոնք բարձրագույն արժեք են, ապահովված են և պաշտպանված են պետության կողմից²⁶:

Վերոգրյալ տեսակետների հետ համահունչ է նաև Ա. Մանասյանի մոտեցումը. «Ժողովրդավարության համար առանցքային հատկանիշն այն է, որ վերջինիս պարագայում իշխանության աղբյուրը ժողովուրդն է, իշխանությունն իրականացվում է ժողովրդի կողմից և ժողովրդի համար՝ հիմքում ունենալով մարդուն՝ որպես բարձրագույն արժեք, և նպատակ ունենալով անհատի համար երաշխավորել ինքնաարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը»²⁷:

Համաձայնելով այս և տեսության մեջ առկա մի շարք այլ տեսակետներին՝ կարծում ենք, որ ժողովրդավարությունը յուրատեսակ սոցիալ-քաղաքական միջավայր է, որը բնութագրում է առկա քաղաքական ռեժիմը, քաղաքական գաղափարախոսությունը, արժեքները, որի պայմաններում էլ իրացվում է ժողովրդաիշխանության սկզբունքը: «Ժողովրդավարություն» և «Ժողովրդաիշխանություն» հասկացությունների հարաբերակցության համատեքստում հարկ է փաստել նաև այն, որ նրանց միջև առկա է փոխկա-

²⁴ Комарова В.В., Демократия – конституционный императив, Конституционное и муниципальное право, 2009, номер 22-ой, С. 2

²⁵ Кутафин О.Е., Российский конституционализм, Москва, 2008, С. 198

²⁶ Шульженко Ю.Л., Конституционное право России: Курс лекций, Москва, 2007, С. 92

²⁷ Մանասյան Ա., Սահմանադրական կայունությունը՝ որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն գրավական, Երևան, 2019, էջ 37

պակցվածություն, և առանց մեկը մյուսի չեն կարող լիարժեք գոյություն ունենալ: Միայն ժողովրդաիշխանության պայմաններում է հնարավոր իրական ժողովրդավարություն, մյուս կողմից՝ առանց ժողովրդավարության ժողովրդաիշխանությունն անիմաստ կլինի և ձևական բնույթ կկրի:

Տեսության մեջ հաճախ հանդիպում է նաև «ժողովրդաիշխանություն» և «ժողովրդական ինքնիշխանություն» հասկացությունների նմանեցում կամ նույնացում:

Վ.Վ. Լազարևան նշում է, որ ժողովրդական ինքնիշխանություն նշանակում է ժողովրդաիշխանություն, որի դեպքում իշխանության աղբյուրն ու կրողը ժողովուրդն է²⁸: «Մեծ իրավաբանական բառարանում» հեղինակները նշում են, որ ժողովրդաիշխանությունը «հիմնականում նույնացվում է սահմանադրական իրավունքի առավել հաճախ օգտագործվող հասկացության՝ ժողովրդական ինքնիշխանության հետ»²⁹:

«Ժողովրդական ինքնիշխանությունը ժողովրդաիշխանությունն է, հասարակության և պետության մեջ ժողովրդին պատկանող ողջ իշխանությունը: Հենց ժողովրդին պատկանող գերիշխանությունը պետք է միավորի այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ինքնիշխանությունն ու ժողովրդավարությունը: Վերջիվերջո, դեմոկրատիան ի սկզբանե նշանակում է ժողովրդի իշխանություն, իսկ ինքնիշխանությունը թույլ է տալիս հաղորդել այդ իշխանությանը այնպիսի որակ, ինչպիսին գերագույն իշխանությունն է. որևէ բան չկա և չի կարող լինել ավելի բարձր, քան ժողովրդի իշխանությունը»³⁰:

Ժողովրդական ինքնիշխանության և ժողովրդաիշխանության նույնության մասին են վկայում նաև Սահմանադրության մեկնաբանություններում տեղ գտած մոտեցումները³¹:

Ինչպես նշում է Դ.Յ. Շապսուգովը. «Ժողովրդաիշխանության հայեցակարգի գլխավոր հարցը նրա էության մասին հարցն է: Պատմաքաղաքական տեսություններում դրա լուծման տարբերակները, որպես կանոն, կապվում

²⁸ Лазарева В.В., Конституционное право, Москва, 1998, С. 220

²⁹ Сухарева А.Я., Крусских В.Е., Большой юридический словарь, Москва, 2001, С. 353

³⁰ Авакьян С., Точка отсчета – народ, Российская газета, 2006, № 4209, էլ. ռեսուրս՝ <https://rg.ru/2006/10/28/avkiyan.html>, հղումն ըստ 16.10.2022

³¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդ. խմբագրությամբ Գ.Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, 2010, էջ 56

էին ժողովրդի որակական հատկանիշների, նրա կողմից իրականացվող կամ նրա մասնակցությամբ իրականացվող իշխանության ուսումնասիրության հետ: Ժողովրդաիշխանության առանձին ինստիտուտներին, ընթացակարգերին, ձևերին համապատասխանող քաղաքական գիտակցության և քաղաքական մշակույթի վերլուծությունից էր բխում նրա էության մասին հարցի պատասխանը»³²:

Ս.Ա. Ավագյանը նշում է. «Եթե փորձենք գտնել մեկ առանցքային հասկացություն, որը կլինի սահմանադրական իրավունքի խորհրդանիշը, այդ դերին, ամենայն հավանականությամբ, կարող է հավակնել «իշխանություն» եզրույթը, Ռուսաստանի Դաշնության պայմաններում՝ ժողովրդաիշխանությունը: Դրա համար հիմքերը կան. հասարակական հարաբերությունների ողջ համակարգը Ռուսաստանի Դաշնությունում ծառայում է ժողովրդի շահերին, քանի որ ժողովուրդը կա՛մ ինքն է իրականացնում իշխանությունը, կա՛մ դրա համար համապատասխան մարմիններ է ձևավորում: Հաճախ գործընկեր-պետականագետները կարծում են, որ իրավունքի տվյալ ճյուղի առարկան ժողովրդաիշխանության հետ կապված հարաբերություններն են: Նման մոտեցումն ունի գոյության իրավունք: Վերջիվերջո, իշխանության պատկանելության և էության հարցը ցանկացած սոցիալական համակարգում առանցքային է»³³: Թեև հեղինակի այս մոտեցումը վերաբերում է Ռուսաստանի Դաշնությանը, սակայն կարծում ենք, որ այն վերաբերելի է նաև մեր պետության պարագայում:

Օ.Ե. Կուտաֆինը նշում է. «Ժողովրդաիշխանությունը նշանակում է ողջ իշխանության պատկանելությունը ժողովրդին, ինչպես նաև ժողովրդի կողմից այդ իշխանության ազատ իրականացումն իր սուվերեն կամքին և հիմնական շահերին խիստ համապատասխան»³⁴: Հ. Խաչատրյանի մեկնաբանմամբ. «Ժողովրդաիշխանությունն նշանակում է ժողովրդի կամքի բացահայտման և իրականացման քաղաքակիրթ մեխանիզմ, ինչպես անմիջական ժողովրդավարության... բազմապիսի ձևերի, այնպես էլ ներկայացուցչական

³² Шапсугов Д.Ю., Проблемы теории и истории власти, права и государства, Москва, 2003, С. 66

³³ Авакян С. А., Конституционное право России, Том 1, Москва, 2014, С. 35

³⁴ Козлова Е.И., Кутафин О.Е., Конституционное право России, Москва, 1995, С. 98

ժողովրդավարության... համակարգի միջոցով»³⁵:

Հարկ է նշել, որ մեր երկրում ժողովրդաիշխանության օրենսդրական բնորոշումը, որպես այդպիսին, բացակայում է: Միայն Սահմանադրության անփոփոխելի 2-րդ հոդվածն է սահմանում այն մասին, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Այն դիտարկելով Սահմանադրության համակարգային տրամաբանության մեջ՝ կարող ենք փաստել, որ իշխանությունն ամբողջությամբ պատկանում է դրա աղբյուրին՝ ժողովրդին, որն էլ իր հերթին պետական իշխանության մարմիններին փոխանցում է որոշակի իշխանական լիազորություններ:

Սահմանադրության մեկնաբանություններում հեղինակները, անդրադառնալով խնդրո առարկա հոդվածին, նշում են, որ այն «կարևոր նշանակություն ունի սահմանադրական կարգի հիմունքների շարքում: Հաջորդելով 1-ին հոդվածին, որն ամրագրում է Սահմանադրությամբ հիմնադրված պետականության բնութագրերը, կազմակերպման և գործունեության հիմնարար սկզբունքները, այն փաստում է շատ կարևոր հիմնադրույթ. պետական իշխանության համակարգը, նրա ինքնիշխանությունն ածանցված են ժողովրդից, նրա ինքնիշխանությունից, ժողովուրդը հասարակական համակարգում ունի հիմնադրի կարգավիճակ: Ժողովրդաիշխանությունը ողջ իշխանության պատկանելությունն է ժողովրդին, ինչպես նաև ժողովրդի կողմից այդ իշխանության ազատ իրականացումը՝ իր ինքնիշխան կամքին և շահերին լրիվ համապատասխան, որովհետև ժողովուրդն է իշխանության միակ աղբյուրը և տերը»³⁶:

Ժողովրդաիշխանության բնորոշման հարցում հարկ է հաշվի առնել նաև այն տեսաբանների դիրքորոշումը, ովքեր ուսումնասիրում են ժողովրդաիշխանության էության հիմնահարցերն իրենց պրակտիկ գործունեության մեջ: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ Ե.Ի. Կոլյուշինը նշում է. «Ժողովրդաիշխանությունը գերագույն իշխանության պատկանելությունն է ժողովրդին, ինչպես նաև վերջինիս՝ որպես այդ գերագույն իշխանության միակ աղբյուր ճանաչելն

³⁵ **Խաչատրյան Հ.Մ.**, Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Երևան, 1997, էջ 35-36

³⁶ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդ. խմբագրությամբ **Գ.Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**, Երևան, 2010, էջ 55-56

է»³⁷:

ՀՀ սահմանադրական դատարանի նախկին նախագահ Գ.Գ. Հարությունյանը և ՌԴ սահմանադրական դատարանի նախկին դատավոր Մ.Վ. Բազլայն իրենց համատեղ աշխատություններից մեկում ժողովրդաիշխանությունը բնորոշում են որպես պետական իշխանության պատկանելությունը ժողովրդին և այդ իշխանության իրականացումը ժողովրդի կողմից ինչպես անմիջականորեն, այնպես էլ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: «Ժողովրդաիշխանությունը ենթադրում է ժողովրդին որպես պետական իշխանության աղբյուր ճանաչելը, այսինքն՝ բոլոր պետական մարմիններն իրենց լիազորությունները վերջնադրյունքում ստանում են հենց ժողովրդից (ընտրվում են քաղաքացիների կողմից կամ ձևավորվում են նրանց կողմից ընտրված մարմինների միջոցով)»³⁸: Իսկ ՌԴ սահմանադրական դատարանի գործող նախագահ Վ.Դ. Զորկինի կարծիքով՝ ամենաարժեքավորը, ինչի վերաբերյալ մարդկությունը երբևէ «հայտարարի է եկել», իրավունքի գերակայության, ժողովրդաիշխանության և իշխանությունների տարանջատման գաղափարներն են³⁹:

Միննույն ժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-880 որոշմամբ մանրամասն անդրադարձ է կատարել այս սկզբունքին և արտահայտել հանգամանալից իրավական դիրքորոշում⁴⁰, որը համահունչ է տեսության մեջ առկա մոտեցումներին:

Ամփոփելով սույն աշխատանքի շրջանակներում ուսումնասիրված հարցերը՝ հարկ է ընդգծել, որ ժամանակակից իրավագիտության մեջ ձևավորվել են բազմաթիվ մոտեցումներ ժողովրդաիշխանության հասկացության և էության վերաբերյալ, ինչն առանձնահատուկ կերպով ընդգծում է վերջինիս բազմակողմանիությունը: Չնայած հեղինակների մոտեցումների բազմազանությանը՝ ժողովրդաիշխանության հետ կապված մի շարք եզրույթների բացահայտումը թույլ է տալիս փաստել, որ սահմանադրաիրա-

³⁷ **Колюшин Е.И.**, Конституционное (государственное) право России: Курс лекций, Москва, 1999, С. 381

³⁸ **Арутюнян Г.Г., Баглай М.В.**, Конституционное право, энциклопедический словарь, Москва, 2006, С. 275

³⁹ **Зорькин В.Д.**, Цивилизация права: современный контекст, Журнал конституционного правосудия, 2014, № 5, С. 14

⁴⁰ ՀՀ սահմանադրական դատարան, որոշում թիվ ՄԴՈ-880, ընդունվել է 2010 թվականի ապրիլի 23-ին

վական դոկտրինում ժողովրդաիշխանությունը դրսևորվում է որպես ժողովրդավարական համակարգի անքակտելի տարր, որը սահմանում և երաշխավորում է ողջ իշխանության պատկանելությունը պետության քաղաքացիներին: Այն արտահայտվում է ժողովրդական ինքնիշխանության ճանաչմամբ, քաղաքացիներին հնարավորություն է տալիս ազատորեն իրացնել իշխանությունն իրենց կամքին համապատասխան՝ սեփական շահերն ու պահանջմունքները բավարարելու համար: Միաժամանակ, այն չի կարող լինել ինքնանպատակ և պետք է սահմանափակված լինի մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով:

ПОНЯТИЕ И СУЩНОСТЬ ПРИНЦИПА НАРОДОВЛАСТИЯ. ТЕОРЕТИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ

Тадевосян Арман Юрикович

Главный юрист юридического департамента

аппарата Премьер-министра РА,

Член дисциплинарной комиссии полиции РА,

Аспирант кафедры юриспруденции

Академии государственного управления РА

Целью статьи является изучение и анализ проблем связанные с понятием и сущностью принципа народовластия. В ходе исследования были подробно затронуты существующие в теории терминологические вопросы о понятии принципа народовластия, а также различные подходы к сути этого принципа.

В статье представлены собственные подходы и позиции автора о проблемах ставшими предметом исследования.

Ключевые слова: народ, нация, власть, народный суверенитет, демократия, конституция, публичная власть.

THE CONCEPT AND ESSENCE OF THE PRINCIPLE OF PEOPLE'S POWER. THEORETICAL AND LEGAL ANALYSIS

Tadevosyan Arman

Chief lawyer of the Legal Department of the Office

of the Prime Minister of the Republic of Armenia,

Member of the Disciplinary Commission of the RA Police,

PhD student of the Chair of Law of the Public

Administration Academy of the Republic of Armenia

The purpose of the article is to study and analyze problems related to the concept and essence of the principle of people's power. In the course of the study, the terminological issues existing in theory about the concept of the principle of people's power, as well as various approaches to the essence of this principle, were touched upon in detail.

The article presents the author's own approaches and positions on the problems that have become the subject of this research.

Key words: people, nation, power, popular sovereignty, democracy, constitution, public power.

Հոդվածը գրախոսվել է՝ 14.10.2022թ.

Ներկայացվել է տպագրության՝ 25.10.2022թ.

ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԿԱՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Թումասյան Դավիթ

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
քրեական իրավունքի և քրեաբանության
ամբիոնի դասախոս, ի.գ.թ., դոցենտ*

2021թ. մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգիրքը ոչ միայն քրեականացրեց նոր արարքներ կամ ապաքրեականացրեց որոշ արարքներ, այլ նաև բովանդակային փոփոխություններ կատարեց որոշ հանցակազմերում, որոնց թվին է պատկանում նաև մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման քրեականացումը պայմանավորված է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի 2000թ. կոնվենցիայով և դրան կից կամընտիր արձանագրություններից մեկով՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին¹, ինչպես նաև Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին 2005թ. ԵԽ կոնվենցիայով²: 2003թ. համապատասխան հոդված նախատեսվեց ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ՝ քր. օր.), իսկ 2014թ.ն ընդունվեց «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքը, որն առավելապես ուղղված է մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացմանը, աջակցություն և պաշտպանություն ցուցաբերելուն, ինչպես նաև այդ գործընթացներում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը վերաբերող հիմնահարցերի կարգավորմանը:

2003թ. քր. օր-ով քրեականացվելուց ի վեր մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը սահմանող 132-րդ հոդվածում 4 անգամ կատարվել են լրացումներ և փոփոխություններ, սակայն 2021թ. ընդունված քր. օր-ի 188-

¹ ՀՀ-ում ուժի մեջ է 2003թ. մարտի 25-ից:

² ՀՀ-ում ուժի մեջ է 2008թ. մարտի 20-ից:

րդ հոդվածում, որը նույնպես քրեական պատասխանատվություն է սահմանում մարդու թրաֆիքինգի կամ շահագործման համար, կրկին առկա են նորամուծություններ, որոնք էական ազդեցություն են ունենալու մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի գործընթացում:

Ինչպես և նախկին կարգավորումների համատեքստում, ՀՀ նոր քր. օր-ի համաձայն նույնպես, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման օբյեկտիվ կողմը կազմավորվում է երկրնտրելի գործողությունից և այդ գործողությանը (գործողություններին) ուղեկցող երկրնտրելի եղանակից (միջոցներից): Երկրնտրելի գործողությունները նույնն են՝ մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը, ստանալը, շահագործելը, շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը:

Հավաքագրելը հանցագործությունից տուժած անձի համաձայնությունն ստանալուն ուղղված գործողություն կամ գործունեություն է, այսինքն՝ որոշակի հատկանիշների հիման վրա անձին հասարակությունից առանձնացնելը կամ ցուցակագրելը, որի նպատակն է հանցագործությունից տուժած անձի շահագործումը՝ ՀՀ քր. օր-ի 188-րդ հոդվածի 4-րդ մասում նշված շահագործման իմաստով:

Տեղափոխելը ենթադրում է հանցագործությունից տուժած անձին մեկ վայրից այլ վայր տեղափոխելը երկրի ներսում (ներքին թրաֆիքինգ կամ շահագործում) կամ երկրից դուրս (անդրազգային թրաֆիքինգ կամ շահագործում)՝ հետագա շահագործման նպատակով: Հնարավոր է նաև՝ կազմակերպվի աջակցություն սահմանն անօրինական հատելու հարցում, ինչպես նաև կազմակերպվի տարանցիկ կամ նպատակակետ երկրում անօրինական կացությունը:

Փոխանցելը նշանակում է հանցագործությունից տուժած անձին թողնել այլ անձանց տրամադրության (վերահսկողության) տակ՝ նրան վաճառելուց կամ այլ եղանակով օտարելուց հետո (նվիրատվություն, պարտքի մարում, վնասի փոխհատուցում, վարձակալություն, փոխանակություն և այլն): Հանցագործությունից տուժած անձին հանձնումը համարվում է կայացած այն պահից, երբ նա հայտնվում է նրան ընդունող անձի տրամադրության ներքո, և վերջինս կարող է նրան շահագործել:

Ստանալը ենթադրում է գործարքի արդյունքում հանցագործությունից տուժած անձի ձեռքբերում, որը նույնպես կարող է լինել հատուցելի կամ ան-

հատույց, որոշակի ժամկետով կամ անժամկետ, որոշակի պայմաններով կամ առանց դրանց:

Թաքցնելն ուղղված է հանցագործությունից տուժած անձին հասարակությունից առանձնացված պահելուն, նրան քողարկված կամ անտեղյակ պահելուն՝ կիրառելով թաքստոցներ կամ այլ շինություններ ու տարածքներ, անգամ՝ հասարակական:

Շահագործելը հանցագործությունից տուժած անձին բուն շահագործման գործողություններին մասնակից դարձնելն է: Շահագործելը նշանակում է, որ հանցագործությունից տուժած անձը փաստացի սկսում է կատարել շահագործողների կամ երրորդ անձանց օգտին աշխատանք, մատուցել ծառայություն, հանցագործությունից տուժած անձից վերցվում են բջիջը, օրգանը, հյուսվածքը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները, նա կատարում է պահանջվող այլ գործողություններ:

Անձին շահագործման մեջ դնելն արտահայտվում է նրանում, որ նա դրվում է այնպիսի վիճակի (դրության) մեջ, որում չշահագործվելու այլընտրանք չունի:

Շահագործման մեջ պահելն արդեն շահագործվող անձին այդ վիճակից դուրս գալու արգելքն է:³

Մարդուն շահագործելու բովանդակությունը բացահայտված է ՀՀ քր. օր-ի 188-րդ հոդվածի 4-րդ մասում՝ «Սույն հոդվածի, ինչպես նաև սույն օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածների իմաստով՝ շահագործում են համարվում այլ մարդու՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայություն մատուցելուն կամ հակաիրավական գործողություններ կատարելուն հարկադրելը, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, բջիջը, օրգանը, հյուսվածքը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելը»: Հետևաբար, շահագործման ձևերն են՝

1. պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը,
2. հարկադիր աշխատանքը կամ ծառայություն մատուցելուն կամ հակաիրավական գործողություններ կատարելուն հարկադրելը,
3. ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը,

³Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը ՀՀ-ում. Ձեռնարկ, Երևան, 2021, էջեր 14-15:

4. առքը կամ վաճառքը,

5. բջիջը, օրգանը, հյուսվածքը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելը:

Պոռնկության շահագործումը դրսևորվում է պարբերաբար կամ այդպիսի դիտավորությամբ, վարձատրությամբ, անձանց անորոշ շրջանակին ուղղված առաջարկի պայմաններում հաճախորդի հետ սեքսուալ բնույթի գործողությունների կատարմամբ: Հարկ է նշել, որ ՀՀ քր. օր-ն առաջին անգամ է սահմանել «պոռնկություն» եզրույթը՝ վերջ դնելով տեսության և պրակտիկայի մեջ առկա վեճն առ այս՝ թե որ արարքներն են համարվում պոռնկություն: Այս եզրույթի համար որոշ չափով հիմք է հանդիսացել Հ.Ա. վետիսյանի վերաբերյալ թիվ ԵԱԲԴ/0217/01/16 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2019թ. կայացրած որոշմամբ⁴ արտահայտված իրավական դիրքորոշումը: Հատկանշականն այն է, որ պոռնկությունը չի սահմանափակվում սեռական հարաբերության կատարմամբ, այլ դրսևորվում է սեքսուալ բնույթի գործողությունների կատարմամբ, ինչն ավելի լայն ձևակերպում է և բացի սեռական հարաբերությունից ներառում է նաև սեքսուալ բնույթի ցանկացած գործողություն, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները ցանկացած եղանակով բավարարելը:

Սեքսուալ շահագործման այլ ձևերի, ինչպես նաև հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների մեկնաբանությունը չի փոխվել: Մասնավորապես, «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» ԱՄԿ կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կամ պարտադիր աշխատանքը որևէ պատժի սպառնալիքի տակ անձից պահանջվող որևէ աշխատանքը կամ ծառայությունն է, որի համար այդ անձը կամավոր չի առաջարկել իր ծառայությունները՝ բացառությամբ հարկադիր կամ պարտադիր աշխատանքներին վերաբերող այն դրույթների, որոնք ամրագրված են առանձին միջազգային իրավական փաստաթղթերում⁵:

⁴<https://court.am/storage/uploads/files/service-page/HjY1MESnHG5VYoe6iJhneq395Lcq8u0BaAgE47Wi.pdf>

⁵Հարկադիր կամ պարտադիր աշխատանքը չի ներառում՝

ա) պարտադիր զինվորական ծառայության մասին օրենքով պահանջվող և զուտ զինվորական բնույթի ցանկացած աշխատանք կամ ծառայություն,
բ) ինքնակառավարվող երկրի քաղաքացիների սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կամ ծառայություն,

Հարկադիր ծառայություն մատուցելու ձևեր կարող են համարվել ցանկացած ծառայություններ, բացի սեռական ծառայության կատարմանը հարկադրելը: Շահագործման այս ձևի նախատեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հանցագործությունից տուժած անձի կողմից իրականացվող գործունեությունը ոչ միշտ է համարվում, իսկ երբեմն չի էլ կարող համարվել աշխատանք: Այդ իսկ պատճառով ցանկացած ծառայությունների մատուցմանը հարկադրելը ներառվել է որպես շահագործման ձև:

Հակաիրավական գործողություններ կատարելուն հարկադրելը՝ որպես շահագործման ձև, նորություն է ՀՀ քրեական իրավունքում և պայմանավորված է այն հանգամանքով, որ երբեմն հանցագործությունից տուժած անձից պահանջում են կատարել ոչ թե իրավաչափ ու թույլատրելի ծառայությունների մատուցում, այլ հակաիրավական՝ ներառյալ հանցավոր, գործողություններ: Հանցագործությունից տուժած անձին կարող են հարկադրել զբաղվել հափշտակված գույքի վաճառքով, կատարել հափշտակություններ, վաճառել թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր կամ այլ արգելված առարկաներ՝ գիտակցելով, որ եկամուտները հանցագործությունից տուժած անձը հանձնելու է շահագործողին կամ երրորդ անձանց:

գ) դատարանի կայացրած դատավճռով անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն՝ այն պայմանով, որ այդ աշխատանքը կամ ծառայությունը կատարվի պետական մարմնի վերահսկողության կամ հսկողության ներքո, և որ նշված անձը չփոխանցվի կամ չհանձնվի մասնավոր անձանց, ընկերությունների կամ ընկերակցությունների տնօրինմանը,

դ) արտակարգ իրավիճակների պայմաններում պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, այսինքն՝ պատերազմի, տարերային աղետի կամ դրա սպառնալիքի դեպքում, ինչպիսիք են հրդեհները, ջրհեղեղները, սովը, երկրաշարժը, սուր համաճարակները կամ տնային կենդանիների համաճարակները, կենդանիների, միջատների կամ մակաբույծների հարձակումները և ընդհանրապես այն իրավիճակները, որոնց դեպքում վտանգի են ենթարկվում կամ կարող են ենթարկվել ամբողջ բնակչության կամ նրա մի մասի կյանքը կամ նորմալ կենսապայմանները,

ե) համայնքային բնույթի փոքր ծավալի աշխատանքները, որոնք կատարվում են տվյալ համայնքի անդամների անմիջական օգուտի համար, և որոնք, հետևաբար, կարող են համարվել համայնքի անդամների սովորական քաղաքացիական պարտականություններ՝ պայմանով, որ համայնքի անդամները կամ նրանց անմիջական ներկայացուցիչներն իրավունք ունենան այդ աշխատանքների նպատակահարմարության վերաբերյալ արտահայտել իրենց կարծիքը:

Ստրկությունը, ստրկությանը նմնավոր վիճակի մեջ դնելը⁶, առքը կամ վաճառքը՝ որպես շահագործման ձևեր, նույնպես փոփոխության չեն ենթարկվել:

Մարդու բջիջը, օրգանը, հյուսվածքը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելը՝ որպես մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ձև, հիմնականում փոխկապակցված է տրանսպլանտոլոգիայի զարգացման հետ, սակայն հարկ է նշել, որ բջջի, օրգանի, հյուսվածքի կամ կենսաբանական նյութերի կամ հեղուկների շահագործումը չի սահմանափակվում միայն փոխպատվաստման համար դրանք օգտագործելով (չնայած դա այս շահագործման ամենատարածված տարատեսակն է), դրանք կարող են օգտագործվել նաև բժշկական փորձերի, արդյունաբերությունում, կանիքալիզմի, կրոնական ծիսակատարությունների համար և այլն:⁷ ՀՀ նոր քր. օր-

⁶Այդ վիճակները պայմանականորեն բաժանվել են 4 խմբի՝

1. Պարտապանի ստրկացում՝ այնպիսի վիճակ կամ դրություն, երբ պարտապանը, որպես պարտքի ապահովման միջոց, գրավ է դնում կամ իր աշխատանքը, կամ իրենից կախյալ վիճակում գտնվող անձի աշխատանքը, եթե կատարվող աշխատանքի արժեքը չի հաշվակցվում տվյալ պարտքի մարմանը, կամ եթե այդ աշխատանքի տևողությունը չի սահմանափակվում և դրա բնույթը չի կոնկրետացվում:

2. Ճորտական վիճակ՝ հողի այնպիսի օգտագործումը, որի դեպքում օրենքով, ավանդույթի ուժով կամ փոխադարձ համաձայնության հիման վրա օգտագործողը պարտավոր է ապրել և աշխատել ուրիշին պատկանող հողատարածքի վրա և վարձատրությամբ կամ առանց դրա որոշակի աշխատանք կատարել այդ սեփականատիրոջ օգտին ու չի կարող փոփոխել իր նման վիճակը:

3. Կնոջ ազատ ամուսնանալու իրավունքը ոտնահարող, կնոջն այլ անձի վարձակալությամբ կամ այլ պայմանով կամ ժառանգությամբ փոխանցելու ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, երբ՝

ա) կնոջ ծնողները, խնամակալը, ընտանիքը կամ յուրաքանչյուր այլ անձ կամ անձանց խումբ դրամով կամ բնեղենով վարձատրելու դիմաց խոստանում են ամուսնացնել կամ ամուսնացնում են այդ կնոջը՝ առանց նրան մերժելու իրավունք վերապահելու,

բ) կնոջ ամուսինը, վերջինիս ընտանիքը կամ տոհմն իրավունք ունեն վարձատրությամբ կամ այլ պայմանով փոխանցելու տվյալ կնոջն այլ անձի,

գ) ամուսնու մահից հետո կինը ժառանգաբար փոխանցվում է մեկ այլ անձի:

4. Երեխային շահագործման նպատակով այլ անձի փոխանցելու ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, այսինքն՝ երբ երեխան (մինչև 18 տարեկան անձը) ծնողների կամ նրանցից մեկի կամ խնամակալի կողմից վարձատրությամբ կամ առանց դրա փոխանցվում է մեկ այլ անձի՝ այդ երեխայի կամ նրա աշխատանքի շահագործման նպատակով:

⁷«Մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստման մասին» ՀՀ օրենքով սահմանված են այն դեպքերը և պայմանները, երբ կարող է կատարվել փոխպատվաստումը, սահմանված է նաև փոխպատվաստում իրականացնելու կարգը:

ով ընդլայնվել է կենսաբանական այն տարրերի շրջանակը, որոնց վերցնելը շահագործում է: Շահագործման այս ձևի համար բավարար է պարզել նպատակը, անգամ եթե հանցագործներին չի հաջողվել իրականացնել իրենց հանցավոր մտադրությունը՝ վերցնել հանցագործությունից տուժած անձի բջիջը, օրգանը, հյուսվածքը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները: Բջիջների թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերն ավելացել են վերարտադրողական բժշկության զարգացմանը զուգահեռ, երբ հանցավորի ուշադրությունը սևեռվում է սեռական բջիջների, զիգոտների, էմբրիոնների վրա:

Հանցագործության կատարման եղանակներն են՝ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը կամ հարկադրանքի այլ ձևերը, առևանգումը, խաբեությունը կամ վստահությունը չարաշահելը, անձի պաշտոնից կամ ծառայողական դիրքից, կամ լիազորություններից բխող ազդեցությունը կամ հանցագործությունից տուժած անձի անձնական կախվածությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելը, կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռքբերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալը կամ խոստանալը, կամ առաջարկելը, կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի կողմից նման համաձայնություն տալու համար նման օգուտ ստանալը կամ առաջարկն ընդունելը:

Բռնություն գործադրելը անձի նկատմամբ ցանկացած տեսակի և ծանրության բռնություն գործադրելն է՝ նպատակ հետապնդելով շահագործել անձին: ՀՀ քր. օր-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բռնությունն այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով՝ դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելն է:

Որոշված են փոխպատվաստման թույլատրելի սահմանները և սահմանափակումները շրջանակը: Փոխպատվաստումը կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ մյուս բժշկական միջոցառումները չեն կարող երաշխավորել հիվանդի կյանքի փրկությունը և (կամ) առողջության վերականգնումը: Կենդանի դոնորից փոխպատվաստման նպատակով կարող են վերցվել միայն զույգ օրգաններից մեկը, կենտ օրգանի մի մասը կամ հյուսվածքը, որոնց բացակայությունը չի կարող առաջացնել դոնորի կյանքի համար վտանգ ներկայացնող փոփոխություններ: Սահմանափակումները վերաբերում են և այն անձանց շրջանակին, ովքեր կարող են լինել դոնոր:

Բռնության սպառնալիքը բռնություն գործադրելու իրական⁸ հնարավորությունն առաջացնող վիճակն է, երբ հանցագործը հանցագործությունից տուժած անձի մոտ ձևավորում է բռնությունը գործադրելու իրական մտավախություն:

Հարկադրանքի այլ ձևերը հանցագործությունից տուժած անձի դիմադրությունը ճնշելուն ուղղված՝ բռնություն կամ դրա սպառնալիք չհանդիսացող գործողություններն են, օրինակ՝ հանցագործությունից տուժած անձին կամ նրա մերձավորներին արատավորող տեղեկություններ տարածելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը:

Առևանգելու հասկացությունը նույնն է, ինչ մարդուն առևանգելու հանցակազմում:

Խաբեությունն իրականությունը խեղաթյուրելն է կամ իրականության մասին լռելն է, երբ անձը պարտավոր էր հայտնել այն: Խաբեությունը մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքում պետք է լինի միջոց անձին մոլորության մեջ գցելու, իրական աշխատանքի կամ ծառայության, դրանց մատուցման վայրի, պայմանների մասին ոչ հավաստի պատկերացումներ ձևավորելու և այդ եղանակով հանցագործությունից տուժած անձից համաձայնություն ստանալու համար: Հանցագործությունից տուժած անձը կարող է չիմանալ կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության բնույթի, ծավալի, վարձատրության, դրանցից հրաժարվելու, դրանց մատուցելու վայրի

⁸Սպառնալիքն իրական է համարվում այն դեպքում, երբ հանցագործությունից տուժած անձը բավարար հիմքեր է ունենում վախենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած՝ հանցագործությունից տուժած անձը պետք է կարծի, որ սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Միևնույն ժամանակ, թեև սպառնալիքի իրական լինելը հավաստելու համար հանցագործությունից տուժած անձի սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, սակայն արարքի որակման համար այն ածանցյալ նշանակություն ունի, առաջնայինը օբյեկտիվ իրադրության գնահատումն է: Հնարավոր են դեպքեր, երբ օբյեկտիվ իրադրությունը հիմք չի տալիս սպառնալիքն իրական գնահատելու համար, սակայն անձն իր հոգեկան լարված վիճակի, հոգեկան առանձնահատկությունների կամ այլ պատճառներով իրականությունը խեղաթյուրված է ընկալում՝ կարծելով, թե սպառնալիքն իրական է: Օբյեկտիվ իրադրության գնահատումը ենթադրում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են սպառնալիքի բովանդակությունը, սպառնալիք տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, հանցավորի և հանցագործությունից տուժած անձի միջև հարաբերությունների բնույթը, հանցավորի անձը և այլն: Հետևաբար, սպառնալիքի իրական լինելու հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է լուծվի՝ գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ հանցագործությունից տուժած անձի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով:

կամ տնտղության և այլ հարցերի մասին, կամ այդ ամենը նրան ներկայացված լինի խեղաթյուրված և իրականությանը չհամապատասխանող ձևաչափով:

Վստահությունը չարաշահելու դեպքում հանցավորն օգտվում է տուժածի հետ փոխհարաբերություններում ձևավորված փոխադարձ վստահությունից, օրինակ՝ անձնական, գործնական, մասնագիտական հիմքով:

Անձի պաշտոնից կամ ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցությունը կամ հանցագործությունից տուժած անձի անձնական կախվածությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելը դրսևորվում է հանցագործության կատարման մի քանի եղանակով: Կախվածությունը կարող է պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով՝ աշխատանքային, ծառայողական, մասնագիտական, ընտանեկան, հոգեբանական և այլն: Օրինակ՝ համաձայն ՀՀ քրեակատարողական օրենսդրության՝ դատապարտյալները կարող են ներգրավվել և՛ վարձատրվող, և՛ չվարձատրվող աշխատանքներում: Ընդ որում, չվարձատրվող աշխատանքները պետք է իրականացվեն միայն պատիժ կատարող հիմնարկի և նրա մերձակա տարածքի բարելավման նպատակով: Ժամկետային զինվորական ծառայողներն իրենց ծառայության ընթացքում պետք է կատարեն զինվորական ծառայությանն առնչվող և իրենց իրավասության մեջ մտնող աշխատանքներ կամ ծառայություններ: Իրականում դատապարտյալներն ու զինծառայողները կարող են անօրինական ներգրավվել այլ աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու համար, որոնք նրանց պարտականությունը չեն (օրինակ՝ կարող է իրականացվել հարկադիր աշխատանք, որը կապված է հրամանատարի տան վերանորոգման կամ կառուցման, նրան պատկանող դաշտերի և այգիների մշակման, բերքահավաքի հետ): Այս պարագայում մարդկանց նշված խմբերը դառնում են շահագործման համար առավել խոցելի վարչակազմի աշխատակիցների, պետերի կամ վերադաս հրամանատարների ու նրանց ընտանիքի անդամների համար:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի անձնական կախվածությունը, որը կարող է պայմանավորված լինել անձի մոտ առկա սոցիալական, հոգեբանական, ֆինանսական կամ այլ ծանր վիճակներով: Օրինակ՝ ընտանիքում բռնության ենթարկված անձը, անձնական կախվածության մեջ գտնվելով ընտանիքի մի անդամից, առավել խոցելի է շահագործման նկատմամբ, կամ բախվում հասակակիցների կողմից մերժված երեխան, որն աջակ-

ցություն է ստացել բակային հեղինակություն հանդիսացող անձից և ընկալում է վերջինիս որպես «փրկիչ» ու հոգեբանական կախվածության մեջ է գտնվում նրանից, համաձայնում է վերջինիս օգնել և աջակցել՝ փաստացի կատարելով «փրկիչ»-ի բոլոր կարգադրությունները:

Վիճակի խոցելիությունն օգտագործել նշանակում է որևէ իրավիճակի չարաշահում, երբ անձը բացի ենթարկվելուց չունի իրական կամ ընդունելի այլընտրանք: Խոսքը խոցելիության ցանկացած տիպի մասին է՝ ֆիզիկական, հոգեկան, հոգեբանական, հուզական, ընտանեկան, սոցիալական կամ տնտեսական: Սա վերաբերում է ճգնաժամային իրավիճակների բոլոր տիպերին, որոնք կարող են ստիպել մարդուն հաշտվել շահագործման հետ: Խոցելի է համարվում այն վիճակը, երբ անձն ընտրում է վատը կամ վատթարագույնը:

Հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի հետ համաձայնությունն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալը կա՛մ խոստանալը, կա՛մ առաջարկելը, կա՛մ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի կողմից նման համաձայնություն տալու համար նման օգուտ ստանալը կամ առաջարկն ընդունելը՝ որպես հանցագործության կատարման եղանակ, նշանակում է, որ հանցագործությունից տուժած անձի ծնողներին, խնամակալներին, մանկապարտեզի դաստիարակին և այլ անձանց վճարումների կամ բարիքների փոխանցման միջոցով նյութապես շահագրգռում են՝ նրանց համաձայնությունն ստանալու նպատակով:

Ինչպես և նախկինում, ՀՀ քր. օր-ի 188-րդ հոդվածով նախատեսված՝ հանցագործության սուբյեկտ է 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

2022թ. հուլիսի 1-ից հետո, քանի որ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման իրականացմանը կարող են ներգրավվել նաև տարբեր իրավական անձինք՝ աշխատանքի տեղավորման, ամուսնական, մոդելային, տուրիստական և այլ գործակալություններ, գործարաններ և արտադրամասեր, ապա քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել նաև իրավաբանական անձը: ՀՀ նոր քր. օր-ի համաձայն՝ իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե՝

1) մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ այդպիսի անձի թողտ-

վությամբ կամ դրդմամբ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով և ի շահ իրավաբանական անձի գործելով,

2) իրավաբանական անձի կողմից չի ապահովվել դրա գործունեությունը կարգավորող օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված պարտականությունների կատարումը, որը հանգեցրել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի, իրավաբանական անձին ներկայացնող անձի կամ իրավաբանական անձի աշխատողի կողմից մարդու թրաֆիքինգի կամ շահագործման կատարմանը,

3) մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով կամ իրավաբանական անձի միջոցով (այն օգտագործելով):

ՀՀ քր. օր-ի 188-րդ հոդվածի 5-րդ մասը բովանդակում է դրույթ այն մասին, որ սույն հոդվածով, ինչպես նաև ՀՀ քր. օր-ի 189-րդ և 190-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններից տուժած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից իր կատարած ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցանքների համար, որոնցում ներգրավված է եղել իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում և այդ հանցանքները կատարել է հարկադրանքի ներքո:

Խրախուսական նորմը կիրառելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

1) հանցագործություններից տուժած անձը պետք է կատարած լինի ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք,

2) այդ հանցանքներում անձը պետք է ներգրավված լինի իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում,

3) անձն այդ հանցանքները պետք է կատարի հարկադրանքի ներքո:

Այստեղ հարկ է նշել նաև, որ անձն արարքը հարկադրանքի ներքո կատարելիս և քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելիս դրա հետևանքով չպետք է զրկված լինի իր արարքը գիտակցելու կամ դեկլարելու հնարավորությունից, հակառակ դեպքում՝ նա կազատվի քրեական

պատասխանատվությունից ՀՀ քր.օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքով⁹:

Խրախուսական նորմի բովանդակությունը չի փոխվել, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահագործման ձևերի մեջ նախատեսվել է նաև հակաիրավական գործողություններ կատարելուն հարկադրելը, փոփոխվելու է նորմի կիրառման պրակտիկան: Քանի որ, եթե ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների կատարումը շահագործման ձև է, ապա այդ արարքները կատարած անձը պետք է ճանաչվի հանցագործությունից տուժած անձ այդ շահագործման ձևի համատեքստում, այլ ոչ թե քննարկվի նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը, որից հետո, կատարած հանցագործության ծանրությունը հաշվի առնելով, կիրառվի քննարկվող խրախուսական նորմը:

Երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը կամ շահագործումը նախատեսված է ՀՀ քր. օր-ի 189-րդ հոդվածով:

ՀՀ քր. օր-ի 189-րդ հոդվածով նախատեսված՝ հանցագործությունից տուժած անձ է հանդիսանում 18 տարին չլրացած անձը կամ անօգնական վիճակում գտնվողը: Որպես անօգնական՝ հանդես է գալիս այն անձը, որը, իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված, ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը: Այսինքն՝ ՀՀ քր. օր-ն ընդլայնել է այն անձանց շրջանակը, ում թրաֆիքինգի կամ շահագործման առնչությամբ հանցագործության կատարման եղանակները (միջոցները) պարտադիր չեն: Եվ եթե նախկինում որպես այդպիսիք էին հանդիսանում միայն երեխաները և հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ ղեկավարելու հնարավորությունից զրկված անձինք, ապա նոր քր. օր-ի համաձայն՝ դրանք երեխաներն են, ինչպես նաև այն անձինք, ովքեր, թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան վիճակով պայմանավորված, ի վիճակի չեն դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իրենց արարքը կամ գիտակցել իրենց նկատմամբ կատարվող արարքի բնույթը:

⁹Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառել ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ, եթե դրա հետևանքով անձը չէր կարող գիտակցել կամ ղեկավարել իր արարքը:

Ի տարբերություն մարդու թրաֆիքինգի կամ շահագործման՝ երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը կամ շահագործումը բնութագրվում է գործողությամբ կամ կատարման եղանակով (միջոցներով): Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման գործողությունները երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ կատարելը որակվում է ՀՀ քր. օր-ի 189-րդ հոդվածով նույնիսկ այն դեպքում, երբ դրանք կատարվել են առանց ՀՀ քր. օր-ի 188-րդ հոդվածի 1-ին մասում նշված եղանակների (բռնություն, սպառնալիք, խաբեություն, վիճակի խոցելիության օգտագործում և այլն): Հանցագործության կատարման թվարկված եղանակների մի մասը երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգի կամ շահագործման ծանրացնող հանգամանքներ են:

Շահագործման ձևերը նույնն են, ինչ ՀՀ քր. օր-ի 188-րդ հոդվածում, միայն տարբերվում են պոռնկության շահագործման և հարկադիր աշխատանքի մեկնաբանությունները: Այսպես, Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին ԵՖ կոնվենցիայի¹⁰ 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երեխայի պոռնկությունը կամ մանկական մարմնավաճառությունը երեխային սեռական բնույթի գործողությունների համար օգտագործելն է, երբ վճարում են կամ խոստանում ցանկացած այլ վարձատրություն կամ վճար՝ անկախ այն բանից, թե այդ վարձատրությունը կամ վճարը կամ էլ նման խոստումը տրվում է հենց երեխայի՞ն, թե՞ մի երրորդ անձի:

Երեխայի հարկադիր աշխատանքն իր բնույթով, պայմաններով և այլ առանձնահատկություններով ստացել է իր կարգավորումը Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին թիվ 182 ԱՄԿ կոնվենցիայում¹¹, որի 3-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերն ընդգրկում են՝

ա) ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը համանման աշխատանքը, ինչպիսիք են երեխաների վաճառքը և առևտուրը, պարտքային ստրկացումը կամ ճորտային կախվածությունը, ինչպես նաև հարկադիր կամ պարտադիր աշխատանքը, այդ թվում՝ երեխաների պարտադիր կամ

¹⁰ՀՀ-ում ուժի մեջ է 2021թ. հունվարի 1-ից:

¹¹ՀՀ-ում ուժի մեջ է 2006թ. հունվարի 2-ից:

հարկադիր հավաքագրումը զինված ընդհարումներում օգտագործելու համար,

բ) երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը սեռական ծառայությամբ զբաղվելու, պոռնոգրաֆիկ արտադրանքի արտադրության կամ նման ներկայացումների համար,

գ) երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը հակաիրավական գործունեությամբ զբաղվելու, մասնավորապես թմրանյութերի արտադրման և վաճառքի համար, ինչպես դրանք սահմանված են համապատասխան միջազգային պայմանագրերում,

դ) աշխատանքը, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

Նման մեկնաբանությունը հնարավորություն է ընձեռում առավել շատ դեպքեր դիտարկել որպես երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգ կամ շահագործում՝ հաշվի առնելով այն, որ սեռական և աշխատանքային շահագործումն ընդգրկում է տարաբնույթ դրսևորումներ:

Երեխայի հարկադիր աշխատանքը քննարկելիս հատուկ ուշադրության է արժանի ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2308-Ն որոշումը, որով հաստատվել է մինչև 18 տարեկան անձանց, հղի կանանց և մինչև 1 տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը: Այդ ցանկում ներառված աշխատանքներում երեխայի ներգրավումը նույնպես կոչվում է որպես երեխայի շահագործում:

Ամփոփելով սույն հոդվածը՝ կարելի է նշել, որ ՀՀ նոր քր. օր-ն առավել առաջադիմական է և նախատեսում է թե՛ միջազգային օրենսդրությունից բխող, միջազգային ու ազգային պրակտիկայով պայմանավորված նորամուծություններ, թե՛ միտված է մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելով: Իհարկե, նորացված օրենսդրության արդյունավետությունը հնարավոր կլինի գնահատել միայն համապատասխան պրակտիկան ձևավորելուց հետո՝ համակողմանի վերլուծության արդյունքում:

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА ТРАФФИКИНГА ИЛИ ЭКСПЛУАТАЦИИ ЧЕЛОВЕКА В КОНТЕКСТЕ НОВОГО УГОЛОВНОГО КОДЕКСА РА

Тумасян Давид Артёмович

*Преподаватель кафедры уголовного права
и криминологии Образовательного комплекса
полиции РА, кандидат юридических наук, доцент*

В статье рассматривается траффинг или эксплуатация человека в контексте нового уголовного законодательства РА. С учетом того, что изменились некоторые формы эксплуатации, пересмотрены основания беспомощности лица, закреплена уголовная ответственность юридических лиц, произойдут существенные изменения также и в практике борьбы с данным преступлением. Цель указанных в статье комментариев и сравнений — помочь сотрудникам правоохранительных органов ориентироваться в свете новых правоотношений осуществлять борьбу с траффингом или эксплуатацией человека более эффективно.

Ключевые слова: траффинг, эксплуатация человека, формы эксплуатации, траффинг или эксплуатация ребенка или лица, находящегося в беспомощном состоянии, принуждение к совершению противоправных действий.

CRIMINAL LEGAL CHARACTERISTICS OF HUMAN TRAFFICKING OR EXPLOITATION IN THE CONTEXT OF THE NEW RA CRIMINAL CODE

Tumasyan Davit

*Lecturer at the Chair of Criminal Law
and Criminology, Academy of the
Educational Complex of Police of RA,
PhD in Law, Associate Professor*

The article deals with human trafficking or exploitation in the context of the RA new criminal legislation. Taking into account the fact that some forms of exploitation have changed, the grounds for the helplessness of a person have been revised, the criminal liability of legal entities has been fixed, there will be significant changes in the practice of combating this crime. The purpose of the comments and comparisons mentioned in the article is to help law enforcement officers to navigate in the light of new legal relations and to combat human trafficking or exploitation more effectively.

Key words: human trafficking, human exploitation, forms of exploitation, trafficking or exploitation of a child or a person in a helpless state, coercion to commit illegal acts.

Հոդվածը գրախոսվել է՝ 08.10.2022թ.
Ներկայացվել է տպագրության՝ 17.10.2022թ.

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ

Լազարյան Արփի

*Հայաստանի Հանրապետության գիտությունների
ազգային ակադեմիայի փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ:
Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության քրեական օրենսդրության,
քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի
քաղաքականության մշակման վարչության,
քրեական և քրեադատավարական օրենսդրության
մշակման բաժնի պետ
Հայաստանի Հանրապետության ոստիկանության
կրթահամալիրի քրեական իրավունքի և
քրեաբանության ամբիոնի դասախոս*

Հանցավորության կանխարգելման, հանցավոր ոտնձգություններից մարդու կյանքի ու առողջության, մարդու և քաղաքացու այլ իրավունքների ու ազատությունների, սեփականության, հասարակական կարգի և հասարակական անվտանգության, շրջակա միջավայրի և ՀՀ սահմանադրական կարգի պաշտպանության ապահովման գործում առանձնահատուկ նշանակություն է տրվում մեր պետության կողմից իրականացվող հանցավորության դեմ պայքարի քաղաքականությանը, որի բաղկացուցիչ մասն են կազմում քրեական պատիժների արդյունավետ իրականացումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը:

Վերասոցիալականացման՝ որպես պատիժ կատարող հիմնարկների հիմնական գործառույթի կարևորագույն նպատակներից մեկը դատապարտյալի ուղղումն է, նրա օրինապահ վարքագծի ձևավորումը և ամրապնդումը, իսկ այս գործընթացում կարևորագույն տարրերից է դատապարտյալի խրախուսումը:

Չի կարելի անտեսել դատապարտյալների նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցների համակարգը, որը կանոնակարգում է դատապարտ-

յալների իրավահպատակ վարքագիծը:¹ Դատապարյալի դրական վարքագիծը խրախուսելը նպաստավոր նախադրյալներ է ստեղծում դատապարտյալների ուղղիչ, կրթական միջոցառումներ իրականացնելու և վերջիններիս առօրյան հագեցնելու համար²:

Խրախուսանքների վերաբերյալ հարցի քննարկման արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատապարտյալների վերասոցիալականացման հարցում կարևոր նշանակություն ունի պատժի կրման պայմանների փոփոխումը: Պատժի կրման պայմանների փոփոխման ինստիտուտի էությունը դատապարտյալների իրավական վիճակի փոփոխումն է, մասնավորապես՝ նրանց իրավունքների շրջանակի ընդարձակումը կամ կրճատումը (պատժի կրման պրոգրեսիվ համակարգը)³: Իսկ դատապարտյալի նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցները կարևորագույն նշանակություն են ունենում պատժի կրման պայմանների փոփոխման հարցում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 1543-Ն որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) 211-րդ կետի համաձայն՝ «Կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված խրախուսանքի միջոցները կիրառվում են համապատասխանաբար **կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետի որոշմամբ**: Կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ խրախուսանքի միջոցներ կիրառելու մասին որոշումները հաշվառելու նպատակով կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը վարում է համապատասխան մատյան»:

¹ Մանրամասն տե՛ս «Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները Հայաստանի Հանրապետության 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում», «Պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», **Հ. Խաչիկյան**, էջ 74, Երևան-2016

² Մանրամասն տե՛ս Меры уголовно-правового поощрения позитивного поведения осужденных, отбывающих лишение свободы, **Халилов Р. Р.**, Казань 2021

³ Մանրամասն տե՛ս **Ткачевский Ю.М.** Прогрессивная система исполнения уголовных наказаний. М., 1997:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում սույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

ՀՀ Սահմանադրական դատարանի 22.01.2019 թիվ ՍԴՌ-1439 որոշմամբ արձանագրվել է, որ. «(...) մինչև Ազգային ժողովի կողմից սույն որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, **քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից**, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քանի դեռ պատժի կատարման հետ կապված կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենքով հստակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին (...)»⁴:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանադրական և կոնվենցիոն նորմերի ուժով յուրաքանչյուր անձ ունի պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, որպիսին ժամանակավորապես վերապահվել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին:

Մինչդեռ, կարծում ենք, որ դատապարտյալի նկատմամբ խրախուսանքի միջոց կիրառելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկելու հարցին լուծում տալու համար, **նախ և առաջ**, տեղին է անդրադառնալ միմյանց հետ փոխկապակցված, միմյանցից ածանցված ու միմյանցով պայմանավորված **հետևյալ հարցադրումներին ու դրանց կապակցությամբ ակնկալվող համապատասխան պատասխաններին**:

Դրանք են՝

1) Վարչարարության և վարչական վարույթի մասով.

ա. Կալանավորված անձանց ու դատապարտյալների հետ ունեցած իրավահարաբերություններում քրեակատարողական հիմնարկը «Վարչարար-

⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=127904>

րության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի իմաստով **«վարչական մարմին»** հանդիսանում է, թե՛ ոչ,

բ. Ըստ այդմ՝ կալանավորված անձանց ու դատապարտյալների հետ ունեցած իրավահարաբերություններում քրեակատարողական հիմնարկի գործունեությունը **«վարչարարություն»** հանդիսանում և ըստ այդմ՝ դրա շրջանակներում **«վարչական վարույթ»** իրականացվում է, թե՛ ոչ,

գ. Ըստ այդմ՝ եթե կալանավորված անձանց ու դատապարտյալների հետ ունեցած իրավահարաբերություններում քրեակատարողական հիմնարկի գործունեությունը **«վարչարարություն»** չի հանդիսանում, ապա նույն այդ գործունեությունն առանձնահատուկ գործունեություն հանդիսանում է, թե՛ ոչ, և այդ գործունեության ընթացքում ծագող, գործող կամ դրանից բխող իրավահարաբերությունները հանդիսանում են արդյոք **հանրային իրավահարաբերություններից ծագած ու դրանից ածանցված** և, ըստ այդմ, վերաբերում են արդյոք **հանրային իրավունքի բնագավառին (ուղորտին)**, թե՛ ոչ, եթե՛ ոչ, ապա՝ **ո՞ր բնագավառին (ուղորտին) են վերաբերում**,

դ. Ըստ այդմ՝ կալանավորված անձանց ու դատապարտյալների հետ ունեցած իրավահարաբերություններում քրեակատարողական հիմնարկի կողմից կայացվող որոշումը **«վարչական ակտ»** հանդիսանում է, թե՛ ոչ,

2) Ի՞նչ հնարավոր հակասությունների և հնարավոր հետևանքների կհանգեցնեն կալանավորված անձանց և դատապարտյալների հետ ունեցած իրավահարաբերություններում քրեակատարողական հիմնարկի գործունեությունը և դրանով պայմանավորված (այդ թվում՝ այդ գործունեության ընթացքում ծագող, գործող կամ դրանից ածանցված)՝ իրավահարաբերությունները վարչարարության կարգավորման տիրույթում դիտարկելը,

Ըստ այդմ՝ վերոնշյալ հարցադրումների կապակցությամբ հարկ է նկատի ունենալ հետևյալը.

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենքի) 1-ին հոդվածի համաձայն՝

«Սույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և

ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները:

Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Սույն օրենքի II-VI բաժինների գործողությունը տարածվում է վարչական մարմինների՝ վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեության վրա, իսկ սույն օրենքի IV-VI բաժինների գործողությունը տարածվում է նաև վարչական մարմինների այնպիսի գործողության և անգործության վրա, որոնք անձանց համար առաջացնում են փաստական հետևանքներ»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) վարչական մարմիններ՝

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմինները՝ Հայաստանի Հանրապետության նախարարությունները, ինչպես նաև Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ:

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետները:

գ) տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար:

2) վարչարարություն՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ»:

Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Սույն օրենքի իմաստով՝

ա) **բարենպաստ վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ

նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման.

բ) **միջամտող վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որն է պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը.

գ) **գուգորդվող վարչական ակտն** այն վարչական ակտն է, որն իր մեջ պարունակում է անձի համար ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ»:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ենթակայության տակ գործող մի շարք քրեակատարողական հիմնարկների կանոնադրություններով ըստ էության արձանագրված է, որ քրեակատարողական նշված հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2001թ. դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին» N 1937 հրամանով հաստատված հավելվածի (ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կանոնադրության) 1.1 կետի համաձայն՝

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ՝ Պետական մարմին) համակարգի կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող քրեակատարողական ծառայությանը (այսուհետ՝ Ծառայություն) վերապահված լիազորությունների լիարժեք իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին դրա մասնակցությունը»:

Վերոնշյալից հետևում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքի կարգավորման առարկան կապվում է վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունների հետ, իսկ նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «վարչական

մարմինը» նույնականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Մինչդեռ ինչպես համապատասխան իրավակարգավորումներով, այնպես էլ որևէ այլ իրավական ակտով քրեակատարողական հիմնարկը, ընդամենը հանդիսանալով իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված մարմիններից որևէ մեկի, այդ թվում՝ «պետական մարմնի» ու դրա տարատեսակների և «տեղական ինքնակառավարման մարմնի» հասկացությունների համատեքստերում ու շրջանակներում ակնհայտորեն չի ընդգրկվում ու չի դիտարկվում և ըստ այդմ՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չէ ու, հետևաբար նաև՝ կալանավորված անձանց ու դատապարտյալների հետ ունեցած իրավահարաբերություններում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի և 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով «վարչական մարմին» չի հանդիսանում, քանի որ «վարչական մարմին» եզրույթը, նշված օրենքի համապատասխան իրավակարգավորման համաձայն, նույնականացվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Այսպիսով՝ վերոնշյալ իրավակարգավորումների միմյանց հետ համակցության մեջ համադրված և համակարգված վերլուծությունից հետևում է, որ քրեակատարողական հիմնարկը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված մարմիններից որևէ մեկի, այդ թվում՝ «պետական մարմնի» և «տեղական ինքնակառավարման մարմնի» հասկացությունների համատեքստում և շրջանակներում չի ընդգրկվում և հանդիսանալով կազմակերպություն՝ «պետական մարմին» կամ «տեղական ինքնակառավարման մարմին», և ըստ այդմ՝ նաև կալանավորված անձանց ու դատապարտյալների հետ ունեցած իրավահարաբերություններում վերոնշյալ իրավակարգավորման իմաստով՝ «վարչական մարմին» չի հանդիսանում:

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային մի շարք որոշումներով (*տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի թիվ ՎԴ2/0016/05/16, 14.03.2017 թվականի թիվ ՎԴ/3804/05/15, 30.04.2015 թվականի թիվ ՎԴ/4651/05/12, 22.05.2016 թվականի թիվ ՎԴ/2659/05/14, 30.11.2018 թվականի թիվ ՎԴ/3310/05/15 որոշումները և այլն*) տվել է «վարչական ակ-

տի» հասկացությանը (բնորոշմանը) ներկայացվող սպառիչ և պարտադիր որակական հատկանիշները:⁵

Մասնավորապես, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում «վարչական ակտի» հասկացությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը վերոնշյալ նախադեպային որոշումներում արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի համաձայն՝ վարչական ակտին բնորոշ են հետևյալ սպառիչ որակական հատկանիշները.

«1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում,

⁵ <http://www.datalex.am/>

փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար:

Ընդ որում, թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար՝ գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար, այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ: (...):

Այսինքն՝ վերոգրյալից միաժամանակ հետևում է, որ վերոնշյալ բոլոր հատկանիշները պարտադիր պետք է առկա լինեն և գործեն միաժամանակ, որպեսզի համապատասխան փաստաթուղթը համարվի «վարչական ակտ»:

Բացի այդ, վերոգրյալից հետևում է նաև, որ նախ և առաջ՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր վերոնշյալ և մյուս համապատասխան նախադեպային մի շարք որոշումներով արձանագրել է, որ «վարչական ակտն» ընդունվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի իմաստով գործածված «վարչական մարմինների», այսինքն՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից, մինչդեռ, ինչպես արդեն փաստարկվեց վերևում, քրեակատարողական հիմնարկը «պետական մարմին» և «տեղական ինքնակառավարման մարմին» հասկացությունների համատեքստում և շրջանակներում չի ընդգրկվում ու չի դիտարկվում, այսինքն՝ որևէ «պետական մարմին» և «տեղական ինքնակառավարման մարմին» չի հանդիսանում և ըստ այդմ՝ «վարչական մարմին» չի հանդիսանում:

Ելնելով պատժի կատարման (կրման) առնչությամբ առանձնահատուկ գործունեության ու դրանով պայմանավորված (այդ թվում՝ այդ գործունեության ընթացքում ծագող, գործող կամ դրանից բխող) իրավահարաբերությունների առանձնահատկություններից՝ դատապարտյալը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի և քրեակատարողական ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերով սահմանված պատիժը կրելու կարգի ու պայմանների ուժով քրեակատարողական հիմնարկի հետ գտնվում է ինչպես կազմակերպական, ներքին ենթակայության տակ, այնպես էլ դրա հետ այլ ուղղակի կապերի մեջ, որոնց շրջանակներում հստակ սահմանված են դատապարտյալների պատիժը կրելու կարգն ու պայմանները,

այդ ընթացքում նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև վերոնշյալ ենթակայությամբ ու կապերով պայմանավորված՝ մնացած բոլոր հարցերն ու գործընթացները:

Քրեակատարողական հիմնարկի և կալանավորված անձի ու դատապարտյալի միջև ծագած իրավահարաբերությունները, իրենց հերթին, չեն կարող վերաբերել հանրային իրավունքի ոլորտին, և, հետևաբար, դատապարտյալի վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի կողմից կայացված բոլոր որոշումները ևս չեն հանդիսանում հանրային իրավունքի բնագավառում (ոլորտում) կայացված, դրանք չեն ընդունվում հանրային իրավունքի բնագավառում (ոլորտում) կոնկրետ գործի կարգավորման նպատակով, ուստի և՛ ուղղված չեն այդ բնագավառում (ոլորտում) անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն, հետևաբար՝ այդ որոշումները չեն հանդիսանում «վարչական ակտեր»՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով «վարչական ակտի» հասկացությանը (բնորոշմանը) ներկայացվող սպառնիչ և պարտադիր որակական հատկանիշներին միաժամանակ չբավարարելու պատճառաբանությամբ:

Նույն կերպ և նույն պատճառաբանությամբ պայմանավորված՝ կալանավորված անձանց ու դատապարտյալների հետ ունեցած իրավահարաբերություններում քրեակատարողական հիմնարկի կողմից ընդունված որոշումներում բացակայում է արտաքին ներգործությունը, ինչը նույնպես ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ նախադեպային որոշումներով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ «վարչական ակտի» հասկացությանը (բնորոշմանը) ներկայացվող սպառնիչ և պարտադիր որակական հատկանիշներից է:

Հարկ ենք համարում նշելու նաև, որ, ինչպես արդեն իսկ նշվեց վերևում, ինչպես դատապարտյալի կապակցությամբ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից կայացված որոշումները, այնպես էլ դրանցից բխող, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի առանձնահատուկ գործունեությունն ու դրանով պայմանավորված (այդ թվում՝ այդ գործունեության ընթացքում ծագող, գործող կամ դրանից բխող)՝ իրավահարաբերությունները չեն հանդիսանում հանրային իրավահարաբերություններից ծագած ու դրանցից ածանցված և ըստ այդմ՝ չեն վերաբերում հանրային իրավունքի բնագավառին (ոլոր-

տին), քանի որ դրանք վերաբերում են քրեական դատավարության՝ դատարանի որոշումն ի կատար ածելու (նշանակված պատժի կատարման) փուլին, իսկ վերջինից բխող հարաբերություններն էլ, իրենց հերթին, կարգավորվում են քրեական և քրեադատավարական օրենսդրություններից ածանցված՝ քրեակատարողական օրենսդրությամբ, ինչից ելնելով էլ՝ քրեակատարողական հիմնարկի գործունեությունն ու դրանով պայմանավորված (այդ թվում՝ այդ գործունեության ընթացքում ծագող, գործող կամ դրանից բխող)՝ իրավահարաբերությունները, որոնք նույնպես վերաբերում են քրեական դատավարության՝ դատարանի որոշումն ի կատար ածելու (նշանակված պատժի կատարման) փուլին, ոչ թե արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, այսինքն՝ վարչարարություն են, ու դրանց շրջանակներում իրականացվում է ոչ թե վարչական վարույթ, այլ քրեակատարողական ոլորտում իրականացվող առանձնահատուկ գործունեություն, և իրավահարաբերություններ են, որոնց կարգավորման իրավական հիմքը քրեական և քրեադատավարական օրենսդրությունից ածանցված քրեակատարողական օրենսդրությունն է, ուստի՝ քրեակատարողական հիմնարկի առանձնահատուկ գործունեությունը և դրանով պայմանավորված (այդ թվում՝ այդ գործունեության ընթացքում ծագող, գործող կամ դրանից բխող)՝ իրավահարաբերությունները քրեակատարողական բնույթի և ըստ այդմ՝ քրեակատարողական իրավունքի նորմերով կարգավորվող առանձնահատուկ գործունեություն և իրավահարաբերություններ են:

Այս կապակցությամբ թերևս տեղին է վկայակոչել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2019 թվականի հունվարի 22-ի ՄԴՌ-1439 որոշումը, որով իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ պատժի կրման ընթացքում կարող են ի հայտ գալ բազմաթիվ իրավահարաբերություններ, որոնք իրենց բնույթով քրեակատարողական հարաբերություններ են, մասնավորապես՝ Քրեակատարողական օրենսգրքով նախատեսված՝ դատապարտյալի կարգապահական պատասխանատվության ենթարկելը, դատապարտյալի կողմից քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողություններն ու անգործությունը բողոքարկելը և այլն:

Հետևաբար՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց ու դատապարտյալների միջև ծագած տվյալ իրավահարաբերությունը կանոնա-

կարգող և դրան վերաբերելի նորմատիվ իրավական ակտ չէ, ուստի վերոնշյալ խնդրո առարկան չի կարող դիտարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված կարգավորումների շրջանակում:

Բացի այդ, քրեակատարողական հիմնարկը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված մարմիններից որևէ մեկի, այդ թվում՝ «պետական մարմնի» հասկացության համատեքստում և շրջանակներում չի ընդգրկվում և հանդիսանալով կազմակերպություն՝ «պետական մարմին», և նույն օրենքի իմաստով «վարչական մարմին» չի հանդիսանում:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ դատապարտյալի կողմից պատժի կրման ընթացքում ծագող, պատժի կատարման (կրման) սահմանված կարգին ու պայմաններին վերաբերող իրավահարաբերությունները վարչարարությունն չեն, և տվյալ դեպքում դրանց նկատմամբ կիրառելի չեն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի համապատասխան դրույթները:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը դրանք համակցության մեջ և համակարգային վերլուծելով վերը նշված իրավական ակտերի լույսի ներքո՝ գալիս ենք հետևյալ եզրահանգման, որ՝

1) Վարչարարության և վարչական վարույթի մասով.

ա.Քրեակատարողական հիմնարկը, հանդիսանալով իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, կալանավորված անձանց ու դատապարտյալների հետ ունեցած իրավահարաբերություններում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի իմաստով «վարչական մարմին» չէ և այդպիսին չի հանդիսանում:

բ. Ըստ այդմ՝ կալանավորված անձանց ու դատապարտյալների հետ ունեցած իրավահարաբերություններում քրեակատարողական հիմնարկի առանձնահատուկ գործունեությունն արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, այսինքն՝ վարչարարություն չէ, և ըստ այդմ՝ կալանավորված անձանց ու դատապարտյալների հետ իրավահարաբերություններում քրեակատարողական հիմնարկի այդ առանձնահատուկ գործունեության ընթացքում վարչական վարույթ չի իրականացվում:

գ. Ըստ այդմ՝ Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ ունեցած իրավահարաբերություններում քրեակատարողական հիմնարկի

գործունեությունը քրեակատարողական բնագավառում (ոլորտում) իրականացվող առանձնահատուկ գործունեություն է, այդ առանձնահատուկ գործունեության ընթացքում ծագող, գործող կամ դրանից բխող իրավահարաբերությունները հանրային իրավահարաբերություններից ծագած ու դրանցից ածանցված չեն և չեն վերաբերում հանրային իրավունքի բնագավառին (ոլորտին), դրանք վերաբերում են քրեական դատավարության՝ դատարանի որոշումն ի կատար ածելու (նշանակված պատժի կատարման) փուլին, իսկ վերջինից բխող իրավահարաբերություններն էլ, իրենց հերթին, կարգավորվում են քրեական և քրեադատավարական օրենսդրությունից ածանցված քրեակատարողական օրենսդրությամբ, ինչով պայմանավորված էլ՝ այդ իրավահարաբերությունները քրեակատարողական բնույթի և ըստ այդմ՝ քրեակատարողական իրավունքի նորմերով կարգավորվող իրավահարաբերություններ են,

դ. Կալանավորված անձանց ու դատապարտյալների վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից կայացվող որոշումը «վարչական ակտ» չէ:

ե. Կալանավորված անձանց ու դատապարտյալների հետ քրեակատարողական հիմնարկի ունեցած քննարկվող իրավահարաբերություններում քրեակատարողական հիմնարկի առանձնահատուկ գործունեությունը՝ (այդ թվում՝ այդ գործունեության ընթացքում ծագող, գործող կամ դրանից բխող) իրավահարաբերությունները վարչարարության կարգավորման տիրույթում դիտելը, կհակասի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի և մյուս համապատասխան իրավակարգավորումների պահանջներին և արդեն իսկ կայացված բազմաթիվ դատական ակտերով մշակված և արձանագրված (ներկայացված) այն դիրքորոշումներին՝ համաձայն որոնց պատժի կատարման ընթացքում ծագող իրավահարաբերություններն առանձնահատուկ քրեակատարողական իրավահարաբերություններ են, ուստի և չեն կարող կարգավորվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներով:

զ. Կալանավորված անձանց ու դատապարտյալների հետ ունեցած քննարկվող իրավահարաբերություններում քրեակատարողական հիմնարկի առանձնահատուկ գործունեությունը (այդ թվում՝ այդ գործունեության ընթացքում ծագող, գործող կամ դրանից բխող) իրավահարաբերությունները վարչարարության կարգավորման տիրույթում դիտարկելը կարող է բա-

ցասական հետևանքներ առաջացնել քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեության վրա՝ պատժի կատարման հիմնական նպատակների պատշաճ իրականացման գործընթացն ու ձևավորված միասնական պրակտիկան խաթարելու առումով:

НЕКОТОРЫЕ ПРАКТИЧЕСКИЕ ВОПРОСЫ СВЯЗАННЫЕ С ПРИМЕНЕНИЕМ МЕР ПООЩРЕНИЯ В ОТНОШЕНИИ ЛИЦ ОСУЖДЕННЫХ К ЛИШЕНИЮ СВОБОДЫ

Лазарян Арпи Ашотовна

Соискатель Института философии, социологии и права Национальной академии наук Республики Армения

Начальник отдела развития уголовного и уголовно-процессуального законодательства

Министерство Юстиции Республики Армения

Лектор кафедры уголовного права и криминологии Образовательного комплекса полиции Республики Армения

Одним из основополагающих гарантий реализации основных прав лиц отбывающих наказание в виде лишения свободы осуждённых является правомерное поведение данных лиц, их добросовестное отношение к образованию и труду, активное участие в мероприятиях самодеятельных организаций осужденных и участие в них, а также возможность поощрения за проявления положительного поведения. Между тем при реализации данного права, в частности, связанное с реализацией судебного контроля за процедурой оценивания «положительного поведения» в данный момент на практике возникают определенные проблемы, которые изучены и представлены в данной статье.

Ключевые слова: осужденный, меры поощрения, административный акт, административное управление, уголовно-исполнительное учреждение.

SOME PRACTICAL ISSUES RELATED TO THE APPLICATION OF INCENTIVES TO PEOPLE CONVICTED TO IMPRISONMENT

Lazaryan Arpi

*Applicant of the Faculty of Philology,
Sociology and Law of the Republic Academy of Sciences.
Head of the Criminal Legislation Development
Department of the Criminal legislation, Penitentiary and
Probation Policy Development division of the Ministry of
Justice of the Republic of Armenia.
Lecturer of the Chair of Criminal Law and
Criminology of the Police Educational Complex of the
Republic of Armenia*

Some practical problems connected with the implementation of the measures of encouragement to the offenders sentenced to the imprisonment

One of the most important guaranties of the implementation of the rights of the sentenced persons to the imprisonment is the opportunity (possibility) to be encouraged for the law-abiding behavior, the faithful attitude against the labor and study, the participation in the works and events of the offenders' self-mail associations of the and also for the exposing the positive behavior. However, currently some practical problems are emerged within judicial control, when this opportunity implenets. These problems are circumstantly analyzed and represented in this article as much as possible.

Key words: The offender, the measures of encouragement, the administrative act, the administration, the penitentiary institution.

Հոդվածը գրախոսվել է՝ 03.10.2022թ.
Ներկայացվել է տպագրության՝ 15.10.2022թ.

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Հակոբջանյան Վիկտորյա

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ,
Իրավաբան ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման
ազգային կենտրոն» ՓԲԸ-ում*

Թմրամիջոցների դեմ պայքարը հանրային առողջապահության ոլորտում քաղաքականության մշակման կարևորագույն ուղղություններից մեկն է: Յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման սահմանադրական իրավունք, ինչը նշանակում է, որ պետությունը պարտավորվում է հոգ տանել իր իրավասության շրջանակներում ապրող բնակչության առողջության մասին, ընդունել համապատասխան իրավական ակտեր, մշակել քաղաքականությունը և ռազմավարական միջոցառումներով քայլ առ քայլ հասնել իր առջև դրված նպատակներին, այն է՝ ֆիզիկապես և հոգեպես առողջ ու սոցիալականապես ակտիվ հասարակություն ունենալուն: Սույն նպատակի մասին անուղղակիորեն հիշատակվում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում, և Հայաստանի Հանրապետությունը, իրեն հռչակելով նաև սոցիալական պետություն, ստանձնում է յուրաքանչյուր քաղաքացու (անձի) առողջության պահպանման պարտականությունը, քանի որ սոցիալական իրավունքների բլոկի մեջ ներառված է նաև առողջության պահպանման իրավունքը: Առողջության պահպանման պարտականությունը՝ որպես քաղաքականության մշակման ուղղություն, ամրագրված է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածում հետևյալ բովանդակությամբ. «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է՝

- բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը»:

Առողջության պահպանման իրավունքի իրացումն առավելագույնս ապահովելու համար պետությունը ձեռնամուխ է լինում հանրային առողջապահության բաղադրամաս կազմող միջոցառումների իրականացմանը,

քանի որ վերջինիս ուսումնասիրության առարկան ոչ միայն հիվանդությունների վերահսկողությունն է, այլ նաև հիվանդությունների կանխարգելումը և շրջակա այնպիսի պայմանների ստեղծումն ու վերահսկումը, որոնք կապահովեն յուրաքանչյուր անձի առողջ լինելը, իսկ առողջությունը ենթադրում է ոչ միայն մարդու սոսկ գոյությունն առանց հիվանդությունների կամ ֆիզիկական արատների, այլև կենսական էներգիայով լեցուն հասարակական և սոցիալական կյանքին ակտիվորեն մասնակցելու, մարդու իրավունքներից անկաշկանդ ձևով օգտվելու և արժանապատիվ կյանքով ապրելու ընդունակությունը: Ինչպես նշեցի, թմրամիջոցների դեմ պայքարը հանրային առողջապահության ուղղություններից է և անհրաժեշտություն է առաջացնում քաղաքականության ճիշտ մշակման, ինչն էլ պիտի իրականացվի այնպիսի միջոցառումների միջոցով, ինչպիսիք են, օրինակ, օրենսդրության կատարելագործումն ու իրավական կոլիզիաների վերացումն այդ ոլորտում: Թմրամիջոցները, որոնք չեն օգտագործվում բժշկական նպատակներով և ունեն ապօրինի շրջանառություն, իրական չարիք են անձանց առողջության համար, քանի որ ծնում են ոչ միայն կործանարար կախվածություն, այլ նաև քայքայիչ ազդեցություն ունեն մարդու առողջության վրա, ուստի թմրամիջոցների դեմ պայքարի արդյունավետությունը հանրային առողջապահության շրջանակներում պետք է հասցվի առավելագույնի:

Բացի այդ, թմրամիջոցների չարաշահումը երկրի վրա էական տնտեսական բեռ է դառնում՝ կապված ուղղակի և անուղղակի բժշկական և ոչ բժշկական ծախսերի հետ¹, քանի որ վերջինս անուղղակիորեն կապ ունի նաև առողջության մատչելիության (availability, accessibility, affordability) հետ, որովհետև ծախսերի ավելացումը թմրամիջոցների չարաշահման և թմրամիջոցներից կախվածության բուժման ու կանխարգելման համար համասնորեն կարող է նվազեցնել բժշկական օգնության և սպասարկման մյուս տեսակների համար նախատեսված ֆինանսավորման չափը: Ուստի պետությունները ջանք չպետք է խնայեն իրավական ու քաղաքական լծակներ, մեխանիզմներ մշակելու և կիրառելու ուղղությամբ թմրամիջոցների չարաշահման դեպքերի նվազեցման համար:

¹Sté u SaurabhRambiharilalShrivastava*, PrateekSaurabhShrivastava and JegadeeshRamasamy
 “Public Health Measures to Combat the Menace of Drug Abuse” Primary Health Care 2014, 4:1

Թմրամիջոցների դեմ պայքարում պետության հիմնական ուղղություններն են ոչ միայն թմրամիջոցների ապօրինի շրջանառության արգելքը և օրենսդրական մակարդակով արգելքի ամրագրումը՝ քրեականացումը, այլ նաև՝ թմրամիջոց գործածած կամ թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման ապահովումը թե՛ իրավական, թե՛ գործնական մակարդակով:

Թմրամիջոց գործածած կամ թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց բժշկական օգնության մասին իրավական կարգավորումներն ամրագրված են «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքով: Օրենսդրի կողմից թմրամիջոցների և հեգեմետ նյութերի իրավական կարգավորման ակտում թմրամիջոց գործածող կամ թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց բժշկական օգնության իրավակարգավորումները զետեղելը պատշաճ քաղաքականության մշակման և իրականացման մասին չի փաստում, քանի որ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի առարկան, հիմք ընդունելով սույն իրավական ակտի վերնագիրը, պետք է լինի թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառությանն առնչվող հարաբերությունները, վերջիններիս օրինական շրջանառությունն ապահովող, ինչպես նաև դրանց ապօրինի շրջանառությունը կանխարգելող գործընթացները: Բացի այդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը: Սույն պարագայում նորմատիվ իրավական ակտի վերնագիրը չի համապատասխանում բովանդակությանը, ուստի անհրաժեշտ է համապատասխանեցնել «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքն իրավական ակտի կազմման օրենսդրական պահանջներին: Բացի այդ, թմրամիջոցների դեմ պայքարի և վերջինիս բաղադրիչը կազմող՝ թմրամիջոց գործածած և թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման մասին իրավադրույթները պիտի լինեն առավելագույնս մանրամասն կարգավորված, ինչը տվյալ պարագայում անհնար է իրականացնել:

Ուստի անհրաժեշտություն է առաջանում, նախ, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի «Բժշկական օգնությունը թմրամոլությամբ հիվանդներին» վերտառությամբ 6-րդ գլուխն

առանձնացնել և մշակել նոր առավել մանրամասն կարգավորումներ պարունակող օրենք:

Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց բժշկական օգնությունը՝ որպես թմրամիջոցների դեմ պայքարի բաղադրիչ, ունի մի շարք առանձնահատկություններ: Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձինք, իրենց կարգավիճակից կախված լինելով, հասարակության մարզինալացված և խարազանված խավի ներկայացուցիչներ են համարվում, ուստի բուժման և սոցիալական ներառականության արդյունավետության համար հասարակության և պետության աջակցության անհրաժեշտություն ունեն: Թմրամիջոցներից կախվածությունը համարվում է խարանային երևույթներից մեկը, նույնիսկ ավելին, քան հոգեկան առողջության խնդիրներ ունենալը: Մասնագետների, փաստաբանների և շահագրգիռ անձանց շրջանում տարածված է այն հիմնավոր համոզմունքը, որ կախվածություն ունենալու խարանը բացասաբար է ազդում թմրամիջոցներից կախվածություն ունեցող և թմրամիջոց գործածած անձանց կլինիկական արդյունքների և բարեկեցության վրա:²³

Սոցիալական խարանի ազդեցությունները կարող են լինել տարբեր տեսակների: Դրանք ներառում են հոգեկան առողջության խնամքի մատչելիության և կյանքի տևողության նվազում, կրթության ցածր մակարդակ, գործազրկություն, քրեական հանցագործությունների մեջ ներքաշվելու ռիսկի բարձրացում և աղքատություն: Չնայած ապացուցողական բժշկության վրա հիմնված բժշկական (նարկոլոգիական) ծառայությունների մատչելիությանը՝ համաճարակաբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ շատ մարդիկ, ովքեր կարող են օգտվել բժշկական համապատասխան ծառայությունից, չեն դիմում բժշկական օգնություն ստանալու համար: Այս-

²³St' u Corrigan, P. W., & Kosyluk, K. A. (2014). Mental illness stigma: Types, constructs, and vehicles for change. In P. W. Corrigan (Ed.), *The stigma of disease and disability* (pp. 35–56). Washington, DC: American Psychological Association.

³St' u Corrigan, P. W., Schomerus, G., Shuman, V., Kraus, D., Perlick, D., Harnish, A., Kulesza, M., Kane-Willis, K., Qin, S., & Smelson, D. (2016b). Developing a research agenda for reducing the stigma of addictions. Part II: Lessons from the mental health stigma literature. *American Journal on Addictions*, 26, 67–74.

պիսով, սոցիալական խարանը դառնում է էական արգելք բժշկական օգնություն ստանալու հարցում:⁴

Սոցիալական խարանի ձևավորումն սկսվում է հասարակությունից և պետության ոչ պատշաճ քաղաքականության վարման արդյունքում ավելի է ամրապնդվում՝ ծնելով մի շարք արգելքներ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման համար, ինչն էլ արգելակում է նաև թմրանյութերի դեմ պայքարը:

«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածով ամրագրվում է թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց հետևյալ եզրույթը և օրենսդրական սահմանումը.

«Թմրամոլությամբ հիվանդ» սույն օրենքով սահմանված կարգով անցկացված բժշկական հետազոտության միջոցով «թմրամոլություն» ախտորոշում ստացած անձ»:

Օրենքի մնացած հատվածներում և գլուխներում նշվում է «թմրամոլ» եզրույթը: Ստացվում է, որ Օրենքի 2-րդ հոդվածում առկա հիմնական հասկացությունների շարքում «թմրամոլ» եզրույթը չի սահմանվում, ինչը ևս հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածին:

Բացի այդ, թմրամոլությամբ հիվանդ կամ թմրամոլ տերմիններն օրենսդրական մակարդակով խարան են նման խնդիրներ ունեցող անձանց վրա, ուստի առաջարկում ենք փոփոխության ենթարկել տերմինը և հետապնդ գործածության մեջ դնել «թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձ» եզրույթը, որի օրենսդրական սահմանումն առաջարկվում է ամրագրել հետևյալը.

«Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձ» այն ֆիզիկական անձը, որի մոտ բժշկական հետազոտության անցկացման արդյունքում բժիշկ-նարկոլոգի կողմից ախտորոշվում է կախվածություն հոգեներգործուն նյութերից (այսուհետ՝ կախվածություն ունեցող անձ)»:

Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց բժշկական օգնությանն առնչվող իրավադրույթները պարունակում են մի շարք խութեր, որոնք

⁴Stéu Corrigan, P. W., & Kosyluk, K. A. (2014). Mental illness stigma: Types, constructs, and vehicles for change. In P. W. Corrigan (Ed.), *The stigma of disease and disability* (pp. 35–56). Washington, DC: American Psychological Association.

բավականին դժվարացնում են գործնականում բժշկական օգնության տրամադրման գործընթացը: Նմանօրինակ իրավակարգավորումներից են բժշկական դիտարկման վերաբերյալ դրույթները: Այսպես, Օրենքը նախատեսում է բժշկական դիտարկման երկու տեսակ՝ կարճատև դիտարկում, որը նախատեսված է այն անձանց համար, որոնք առանց բժշկական նշանակման, հազվադեպ կամ կարճատև ժամկետում կանոնավոր գործածում են թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր՝ զերծ լինելով կայուն, ֆիզիոլոգիական կամ հոգեբանական կախվածություն ձեռք բերելու անմիջական վտանգից, և երկարատև դիտարկում, որը նախատեսվում է կամավոր, պարտադիր կամ հարկադիր բուժման կուրս ստացած, լրիվ կամ մասնակի բուժված անձանց համար (հոդված 48): Այլ կերպ ասած, երկարատև դիտարկում իրականացվում է ՀՀ կառավարության 20.12.2007 «Թմրամոլների նկատմամբ բժշկական դիտարկման և նրանց հաշվառման կարգը սահմանելու մասին» թիվ 1599-Ն որոշմանը (այսուհետ՝ Որոշում) համապատասխան: Սույն որոշման 2-րդ կետով սահմանվում է, որ թմրամոլ են համարվում «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով անցկացված բժշկական հետազոտության արդյունքում «թմրամոլություն» ախտորոշում ստացած բոլոր անձինք: «Թմրամոլություն» ախտորոշում է բժիշկ-նարկոլոգը:

Օրենքով թմրամոլության հիվանդ (թմրանյութային կախվածություն ունեցող անձ) է համարվում սույն օրենքով սահմանված կարգով անցկացված բժշկական հետազոտության միջոցով «թմրամոլություն» ախտորոշում ստացած անձը, իսկ թմրամոլությունը թմրամիջոցների և (կամ) հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործմամբ պայմանավորված հիվանդություն է՝ Հայաստանի Հանրապետությունում գործող հիվանդությունների դասակարգչին համապատասխան:

Օրենքի համակարգային վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ թմրամոլ (թմրանյութային կախվածություն ունեցող անձ) չի համարվում առանց բժշկական նշանակման, հազվադեպ կամ կարճատև ժամկետում կանոնավոր թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածող անձը, ուստի նրա նկատմամբ կիրառելի չեն Որոշմամբ հաստատված իրավակարգավորումները: Ինչ վերաբերում է կարճատև դիտարկմանը, ապա վերջինիս իրականացման կարգի վերաբերյալ որևէ իրավակարգավորում չկա:

Օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բժշկական պարտադիր դիտարկումը սահմանվում է բժշկական երկարատև դիտարկման կարիք ունեցող հիվանդների և բոլոր դեպքերում՝ մինչև 21 տարեկան անձանց նկատմամբ: Ստացվում է՝ պարտադիր բժշկական դիտարկման ենթակա են երկու խումբ անձինք՝

- անձինք, որոնք ընդունել են կամավոր, պարտադիր կամ հարկադիր բուժման կուրս, լրիվ կամ մասնակի ապաքինվել են, այսինքն՝ երկարատև դիտարկման ենթակա անձինք,
- մինչև 21 տարեկան անձինք՝ բոլոր դեպքերում, այսինքն՝ թե՛ երկարատև, թե՛ կարճատև դիտարկման ենթակա անձինք՝ մինչև 21 տարեկան:

Վերջին խումբ անձանց վերաբերյալ օրենսդիրը որդեգրել է բժշկին հայեցողական լիազորություն տրամադրելու քաղաքականություն՝ կանխարգելման նկատառումներից ելնելով: Այլ խոսքով՝ մինչև 21 տարեկան յուրաքանչյուր անձ, առանց բժշկի նշանակման, անկախ թմրամիջոցները գործածելու եղանակից և հաճախականությունից, ենթակա է բժշկական պարտադիր դիտարկման, սակայն բժշկական դիտարկման տեսակի ընտրությունը՝ երկարատև թե կարճատև, կատարում է բուժող բժիշկ-նարկոլոգը՝ կախված իրավիճակից և օրենսդրությամբ սահմանված դրույթներից՝ տվյալ իրավիճակին համապատասխան:

Սույն դրույթը կարող է տարընթերցումների տեղիք տալ և ոչ պատշաճ մեկնաբանության արժանանալ բժիշկ-նարկոլոգների կողմից, ինչը մեծ հավանականությամբ կհանգեցնի պացիենտների իրավունքների խախտման՝ նախատեսված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով:

РОЛЬ ОБЩЕСТВЕННОГО ЗДРАВООХРАНЕНИЯ В БОРЬБЕ С НАРКОТИЧЕСКАМИ СРЕДСТВАМИ КАК ГАРАНТИЯ ОСУЩЕСТВЛЕНИЯ ПРАВА НА ЗДОРОВЬЕ

Акопджанян Виктория Игоревна

Аспирант юридического факультета ЕГУ

Юрист в ЗАО «Национальный центр

лечения зависимостей»

Министерство Здравоохранения

Незаконный оборот наркотиков считается преступным деянием и фиксируется, в первую очередь, по признаку оказания негативного воздействия на здоровье населения. Воздействие последних на организм человека носит психоактивный характер, в результате чего человек становится зависимым, наносит необратимый ущерб его здоровью. Исходя из этих факторов, с учетом международных стандартов, в данной статье мы рассмотрели эффективность государственной антинаркотической политики с точки зрения здоровья населения, провели анализ нормативно-правовой базы оказания медицинской помощи наркозависимым и лицам, употребляющих наркотические средства.

Ключевые слова: наркотические средства, психотропные (психоактивные) вещества, наркозависимость, общественное здравоохранение, право на здоровье.

PUBLIC HEALTH AS A GUARANTEE OF EXERCISING THE RIGHT TO HEALTH IN THE FIGHT AGAINST NARCOTIC DRUGS

Hakobjanyan Victoria

Ph.D. student at YSU Law Faculty

Lawyer at "National Center

of Addictions Treatment" of MoH CJSC

Drug illicit turnover is considered a criminal act and is fixed, first of all, on the grounds of having a negative impact on the health of the population. The effect of the latter on the human organism is psychoactive, as a result of which the person becomes addicted and causes irreversible damage to health. Based on these factors, in this paper we examined the effectiveness of the state anti-drug policy in terms of public health, analyzed the legal framework for the provision of medical care to drug addicts and people who use drugs, taking into account international standards.

Key words: narcotic drugs, psychotropic (psychoactive) substances, drug addiction, public health, the right to health.

Հոդվածը գրախոսվել է՝ 08.06.2022թ.

Ներկայացվել է տպագրության՝ 20.07.2022թ.

ՑՈՒՑՄՈՒՆՔԻ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊՈՆԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ղամբարյան Արթուր

*Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության
և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան*

Հոդվածի նպատակն է ներկայացնել ցուցմունքի դեպոնացման ինստիտուտի քրեադատավարական բնութագիրը ՀՀ քրեական դատավարությունում, մասնավորապես՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի փոփոխության համատեքստում: Հոդվածում հեղինակը նաև իրականացնում է քրեադատավարական սույն ինստիտուտի իրավահամեմատական վերլուծություն՝ հետախորհրդային մի շարք հանրապետությունների քրեադատավարական իրավունքի զարգացման համատեքստում:

Հոդվածի հիմնական խնդիրներն են՝ ուսումնասիրել ցուցմունքի դեպոնացման ինստիտուտի կառուցվածքի հիմնական տարրերը՝ վեր հանելով վերջինիս իրավակարգավորումների շրջանակներում դատավարական լիազորություններով օժտված սուբյեկտների կազմի, վերջիններիս իրավունքների և պարտականությունների բովանդակությունն ու իրացման առանձնահատկությունները:

Հեղինակը ներկայացնում է ցուցմունքի դեպոնացման միջնորդության ներկայացման կարգը և հիմքերը, դրանց բավարարման համար ներկայացվող ընթացակարգային և բովանդակային պահանջները, մերժման հիմքերը և կարգը:

Հոդվածում հեղինակն օգտագործել է մի շարք գիտական մեթոդներ, մասնավորապես՝ սոցիալ-իրավական և իրավահամեմատական մեթոդները:

Բանալի բառեր. ցուցմունքի դեպոնացում, միջնորդություն, քննիչ, դատարան, քրեադատավարական վարույթ:

1. Ցուցմունքի դեպոնացման դատավարական կարգը

1.1. Ընդհանուր դրույթներ

1.1.1. Իրավահամեմատական տեսանկյունը: Իրավահամեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ցուցմունքի դեպոնացման դատավարական կարգը հիմնականում սահմանվում է ընդհանրական ձևով՝ առանց հստակ կարգավորելու ցուցմունքի դեպոնացման ընթացակարգային մի շարք հարցեր: Այսպես՝ Վրաստանի քր. դատ. օր-ի 114-րդ հոդվածը սահմանում է նախաքննության ընթացքում հարցաքննության (ցուցմունքի դեպոնացման) կարգը, իսկ 243-րդ հոդվածը՝ վկայի և տուժողի դեպոնացված ցուցմունքի՝ դատարանում հետազոտման կարգը: Նշված հոդվածներում ամրագրված են ցուցմունքի դեպոնացման դատավարական կարգը սահմանող հետևյալ նորմերը.

1) նախաքննության ընթացքում ցուցմունքի դեպոնացման նպատակով կողմերը նախաքննության կատարման վայրի կամ վկայի գտնվելու վայրի դատավոր-մագիստրանտին ներկայացնում են միջնորդություն (Վրաստանի քր. դատ. օր-ի 114-րդ հոդվածի 1-ին մաս).

2) անձը հարցաքննության է կանչվում դատական ծանուցագրով: Հարցաքննությունն իրականացվում է կողմերի մասնակցությամբ: Կողմերի չներկայանալը չի խոչընդոտում հարցաքննության իրականացմանը (Վրաստանի քր. դատ. օր-ի 114-րդ հոդվածի 3-րդ մաս).

3) արդարադատության շահերից ելնելով՝ կողմերի պատճառաբանված միջնորդությամբ դատարանի որոշման հիման վրա հարցաքննությունը կարող է իրականացվել առանց մյուս կողմին նախապես տեղեկացնելու և նրա բացակայությամբ: Այս դեպքում գործն ըստ էության լուծելիս վկայի ցուցմունքն անթույլատրելի ապացույց է, եթե վկան կարող է կրկին հարցաքննվել (Վրաստանի քր. դատ. օր-ի 114-րդ հոդվածի 4-րդ մաս).

4) վկային պետք է հարցաքննել ողջամիտ ժամկետում: Միջնորդություն ներկայացրած անձի չներկայանալու դեպքում վկան չի հարցաքննվում (Վրաստանի քր. դատ. օր-ի 114-րդ հոդվածի 5-րդ մաս).

5) վկայի դեպոնացված ցուցմունքը դատարանում կարող է հրապարակավ ընթերցվել, ինչպես նաև նրա ցուցմունքի տեսաձայնագրումը կարող է վերարտադրվել, եթե վկան մահացել է, նա բացակայում է Վրաստանից, եթե նրա գտնվելու վայրը հայտնի չէ, և սպառվել են նրան դատարան ներկայացնելու բոլոր ողջամիտ միջոցները (Վրաստանի քր. դատ. օր-ի 243-րդ հոդվածի 1-ին մաս):

Ուկրաինայի քր. դատ. օր-ի 225-րդ հոդվածը սահմանում է ցուցմունքի դեպոնացման դատավարական կարգը: Մասնավորապես՝

1) նախաքնության ընթացքում վկայի և տուժողի ցուցմունքի դեպոնացման նպատակով քրեական վարույթի կողմերը միջնորդություն են ներկայացնում քննչական դատավորին: Վկայի և տուժողի հարցաքննությունն իրականացվում է դատարանում կամ հիվանդ վկայի (տուժողի) գտնվելու վայրում (Ուկրաինայի քր. դատ. օր-ի 225-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերություն):

2) հարցաքննությունն իրականացվում է կողմերի մասնակցությամբ՝ դատական հարցաքննության կանոնների պահպանմամբ: Հարցաքննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված կողմի չներկայանալը չի խոչընդոտում հարցաքննության իրականացմանը: Անձի հարցաքննությունը կարող է իրականացվել պաշտպանության կողմի բացակայությամբ, եթե այդ ընթացքում որևէ անձ չի տեղեկացվել կասկածանքի մասին (Ուկրաինայի քր. դատ. օր-ի 225-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ պարբերություններ):

3) մինչդատական վարույթի ընթացքում ծանր հիվանդ վկայի կամ տուժողի հարցաքննության համար կարող է անցկացվել արտագնա դատական նիստ (Ուկրաինայի քր. դատ. օր-ի 225-րդ հոդվածի 2-րդ մաս):

4) դատաքննության ընթացքում դատարանը պատճառաբանված որոշմամբ կարող է չօգտագործել օրենքով սահմանված կարգով դեպոնացված ցուցմունքը (Ուկրաինայի քր. դատ. օր-ի 225-րդ հոդվածի 3-րդ մասի):

5) դատարանը դատաքննության ընթացքում կարող է հարցաքննել վկային և տուժողին, որոնց ցուցմունքները նախաքննության ընթացքում դեպոնացվել են, եթե նախաքննության ընթացքում հարցաքննությունն իրականացվել է պաշտպանության կողմի բացակայության պայմաններում կամ առկա է ցուցմունքը հստակեցնելու անհրաժեշտություն, կամ անհրաժեշտ է ցուցմունք վերցնել այն հանգամանքների շուրջ, որոնք չեն պարզվել նախաքննության ընթացքում: Վկայի և տուժողի ցուցմունքների ճշմարտացիության ստուգման կամ ցուցմունքների հակասության պարզման նպատակով դեպոնացված ցուցմունքները դատաքննության ընթացքում կարող են հրապարակվել (Ուկրաինայի քր. դատ. օր-ի 225-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր):

Ղազախստանի քր. դատ. օր–ն առավել հանգամանորեն է սահմանում ցուցմունքի դեպոնացման դատավարական կարգը՝ ցուցմունքի դեպոնացման միջնորդություն ներկայացնելու կարգը, ցուցմունքի դեպոնացման մասին որոշում կայացնելու դեպքում մասնակիցներին ծանուցելու կարգը, ցուցմունքի՝ դատական նիստում դեպոնացման ընթացակարգը և արձանագրումը: Այսպես՝ Ղազախստանի քր. դատ. օր–ի 217-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ մինչդատական վարույթ իրականացնող անձը կարող է դիմել դատախազին, որ վերջինս ցուցմունքի դեպոնացման վերաբերյալ միջնորդություն ներկայացնի քննչական դատավորին: Մինչդատական վարույթ իրականացնող անձը դիմումին կցում է վկայի և տուժողի ցուցմունքի դեպոնացման անհրաժեշտությունը հիմնավորող նյութեր: Քննարկելով դիմումը՝ դատախազը մեկ օրվա ընթացքում որոշում է քննչական դատավորին ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը ներկայացնելու հարցը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննչական դատավորը միջնորդությունն ստանալու պահից 3-օրյա ժամկետում քննարկում է այն և կայացնում պատճառաբանված որոշում միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին: Միջնորդության բավարարման դեպքում քննչական դատավորն առաջին իսկ հնարավորության դեպքում նշանակում է հարցաքննության օր, որի մասին ծանուցում է դատախազին, կասկածյալին և նրա պաշտպանին: Միջնորդության մերժման մասին որոշումը բողոքարկվում է օրենքով սահմանված կարգով: Ցուցմունքի դեպոնացման միջնորդության մերժումը չի խոչընդոտում դատարանին կրկին դիմելը, եթե առկա են ցուցմունքի դեպոնացման՝ օրենքով նախատեսված հիմքեր:

1.1.2. Ցուցմունքի դեպոնացման դատավարական կարգի ընդհանուր բնութագիրը ՀՀ-ում: Ցուցմունքի դեպոնացման ինստիտուտի տարրերից է ցուցմունքի դեպոնացման դատավարական կարգը, որը ներառում է ցուցմունքի դեպոնացման միջնորդություն ներկայացնելու և այն քննարկելու կարգը, ցուցմունքի դեպոնացման ընթացակարգը, դեպոնացված ցուցմունքի արձանագրման կարգը:

Մինչդատական վարույթում ցուցմունքի դատական դեպոնացման ինստիտուտի էությունն այն է, որ դատական նիստում փաստացի իրականացվում է քննչական գործողություն՝ հարցաքննություն, որի պարագայում ստացվում է, որ դեպոնացման դատավարական կարգը կարող է պարունակել ինչպես նախաքննության, այնպես էլ դատական վարույթի տարրեր:

Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր-ի 29-րդ գլխում (քննչական գործողությունները) տեղակայված է հարցաքննության ընդհանուր պայմանների վերաբերյալ 217-րդ հոդվածը, որի 7-րդ մասում ամրագրված է ցուցմունքի դեպոնացման ընթացակարգով կատարվող հարցաքննության արձանագրման մասին հղում նախատեսող նորմ: Այս նորմից կարելի է եզրակացնել, որ ցուցմունքի դեպոնացման դատավարական կարգի նկատմամբ վերաբերելի մասով (*mutatis mutandis*¹) կարող են կիրառվել նաև քննչական գործողությունների կարգը սահմանող ընդհանուր նորմերը:

Ինչ վերաբերում է դռնփակ դատական նիստում ցուցմունքի դեպոնացմանը, ապա այն կատարվում է ՀՀ քր. դատ. օր-ի 8-րդ բաժնի (դատական վարույթի ընդհանուր պայմանները) պահանջների վերաբերելի մասով (*mutatis mutandis*) պահպանմամբ:

1.2. Ցուցմունքի դատական դեպոնացման դատավարական կարգի հիմնական տարրերը

ՀՀ քր. դատ. օր-ում սահմանված են ցուցմունքի դեպոնացման միջնորդությամբ դատարան դիմելու սուբյեկտների շրջանակը, միջնորդությանը ներկայացվող պահանջները, **ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշումը**, դատավորի կողմից այն քննարկելու ընթացակարգը և արձանագրման կարգը:

1.2.1. Միջնորդություն ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտները: Ցուցմունքը դեպոնացնելու միջնորդություն կարող են ներկայացնել քննիչը և վարույթի մասնավոր մասնակիցները:

(a) **Քննիչը:** Օրենսդիրը վարույթի հանրային մասնակիցներից միայն քննիչին է վերապահել ցուցմունքը դեպոնացնելու միջնորդություն ներկայացնելու հնարավորություն, քանի որ քննությունը՝ ապացույցներ հավաքելը, քննիչի հիմնական գործառնություն է:

Հսկող դատախազը ցուցմունքը դեպոնացնելու միջնորդություն ներկայացնելու իրավունք չունի, սակայն նա իրավասու է հանձնարարություն տալու քննիչին՝ քրեական հետապնդման հարուցման կամ դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելու համար նշանակություն ունեցող որոշակի հանգամանքներ՝ դատական դեպոնացման շրջանակում պարզե-

¹ Լատ. *mutatis mutandis* – այնքանով, որքանով, անհրաժեշտ փոփոխություններով, համապատասխան փոփոխություններով:

լու կապակցությամբ (ՀՀ քր. դատ. օր-ի 36-րդ հոդվածի 3-րդ մաս): Ճիշտ է, հսկող դատախազն իրավասու չէ հանձնարարել քննիչին, թե այս կամ այն հանգամանքը կոնկրետ ինչ քննչական գործողությամբ պետք է պարզել, սակայն, նկատի ունենալով, որ դատական դեպոնացման ընթացակարգի կիրառմամբ ապահովվում է նաև վարույթի մասնավոր մասնակիցների իրավունքները, հսկող դատախազն իրավասու է քննիչին հանձնարարել անհրաժեշտ հանգամանքները պարզել դատական դեպոնացման շրջանակներում:

(բ) Վարույթի մասնավոր մասնակիցները: Յուզմունքը դեպոնացնելու միջնորդություն կարող են ներկայացնել՝ մեղադրյալը, նրա օրինական ներկայացուցիչը, պաշտպանը, տուժողը, գույքային պատասխանողը, տուժողի և գույքային պատասխանողի օրինական ներկայացուցիչը և լիազոր ներկայացուցիչը: Պետությունը վարույթի մասնավոր մասնակիցներին առաջին անգամ տվել է դատական ընթացակարգերի միջոցով ապացույց ձևավորելու (հավաքելու) գործընթաց նախաձեռնելու հնարավորություն:

Վարույթի մասնավոր մասնակիցները կարող են միջնորդել դեպոնացնելու ինչպես իրենց ցուցմունքը, այնպես էլ մեկ այլ մասնակցի ցուցմունքը: Օրինակ՝ տուժողը, որը պետք է տևական ժամանակով մեկնի Հայաստանից, կարող է միջնորդություն ներկայացնել դատարան՝ իր ցուցմունքը դեպոնացնելու վերաբերյալ: Տուժողի դեպոնացված ցուցմունքը հիմնական դատալսումների ընթացքում կարող է հրապարակվել, և տուժողը հնարավորություն կստանա պաշտպանելու իր գույքային իրավունքները: Տուժողը կարող է դատարան միջնորդել նաև վկայի ցուցմունքը դեպոնացնելու վերաբերյալ:

1.2.2. Յուզմունքի դեպոնացման միջնորդությունը

(ա) Յուզմունքի դեպոնացում կատարելու միջնորդության իրավական ինստիտուտի կառուցվածքը: Յուզմունքի դեպոնացում կատարելու միջնորդության իրավական ինստիտուտը բաղկացած է հետևյալ նորմերից՝ միջնորդության բովանդակությանը ներկայացվող դրույթներ, հակընդդեմ հարցման իրավունքի ապահովմանն ուղղված դրույթներ, միջնորդության վերաբերյալ դատարանի բացասական որոշման և այն բողոքարկելու մասին դրույթներ:

(b) Միջնորդության բովանդակությունը: Ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդությունը պետք է բովանդակի դրա անհրաժեշտության հիմնավորումները, ինչպես նաև վարույթի այն մասնակիցների մասին տվյալներ, որոնց մասնակցությունն անհրաժեշտ է դեպոնացմանը (ՀՀ քր. դատ. օր-ի 307-րդ հոդվածի 1-ին մաս):

Ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդությունը պետք է բովանդակի՝ ՀՀ քր. դատ. օր-ի 306-րդ հոդվածում նշված դեպոնացման հիմքը (իրավական հիմքը), այդ հիմքերի մասին հիմնավոր ենթադրությունը հավաստող փաստական տվյալները (փաստական հիմքը): Այսպես՝ եթե քննիչը կամ վարույթի մասնավոր մասնակիցները միջնորդում են անձի ցուցմունքը դեպոնացնել, քանի որ առկա է հիմնավոր ենթադրություն, որ անձը դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չի ունենա, ապա միջնորդության մեջ պետք է ներկայացնեն, թե ինչ փաստական տվյալների հիման վրա է ձևավորվել դատարան ներկայանալու անհնարինության մասին ենթադրությունը. օրինակ՝ առկա են Հայաստանի Հանրապետության տարածքից հեռանալու մասին ցուցմունքներ կամ օդանավի տոմս, առողջության ծանր վիճակի մասին տվյալներ և այլն:

Ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը պետք է պարունակի տվյալներ նաև վարույթի այն սուբյեկտների մասին, որոնց մասնակցությունն անհրաժեշտ է դեպոնացմանը: Այս նորմում նախատեսված չէ, թե միջնորդության մեջ դեպոնացման մասնակիցների որ տվյալները պետք է նշել: Այս պարագայում անալոգիայի կարգով կիրառելի է «Քննչական գործողություններ կատարելու ընդհանուր կանոնները» գլխում տեղակայված նորմը՝ ըստ որի առանց տեսաձայնագրման կատարված քննչական գործողության արձանագրությունում պարտադիր նշվում են (...) գործողությանը մասնակցող յուրաքանչյուր անձի կարգավիճակը, ազգանունը, անունը, հայրանունը, անհրաժեշտության դեպքում՝ հասցեն և անձնական այլ տվյալներ (ՀՀ քր. դատ. օր-ի 215-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդության բովանդակությունը սահմանող նորմերը եթե համեմատում ենք, օրինակ, ապացուցողական գործողության կատարման դատական երաշխիքների վարույթով միջնորդության բովանդակությունը սահմանող նորմերի հետ, ապա նկատում ենք, որ ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդության մասով առկա են օրենսդրական բացեր: Այսպես՝ ապացուցողական գործողություն կատարե-

լու թույլտվություն ստանալու՝ քննիչի միջնորդությունը պարունակում է՝ 1) իրավասու դատարանի անվանումը, 2) քննիչի անունը, ազգանունը և պաշտոնը, 3) միջնորդությունը դատարան ներկայացնելու տարին, ամիսը, օրը, ժամը և բուրձը, 4) վարույթի համարը, 5) այն անձի վերաբերելի տվյալները, որի սահմանադրական իրավունքը միջնորդվում է սահմանափակել, 6) միջնորդվող ապացուցողական գործողությունը, ինչպես նաև դրա կատարման վերաբերելի պայմանները, այդ թվում՝ ժամկետները, (...) 10) միջնորդությանը կցվող նյութերի ցանկը (ՀՀ քր. դատ. օր-ի 292-րդ հոդվածի 2-րդ մաս): Ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդության մասով նման կարգավորումներ նախատեսված չեն, ուստի այս հոդվածի վերաբերելի նորմերն անալոգիայի կարգով պետք է կիրառել նաև ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդությունը կազմելիս:

(c) Միջնորդությանը կցվող նյութերը. հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման միջոց: Միջնորդությունը ներկայացնողը դրան կցում է իր տիրապետման ներքո գտնվող բոլոր այն նյութերը, որոնք դեպոնացման մասնակիցներին հնարավորություն կտան պատշաճորեն իրականացնելու հակընդդեմ հարցման իրավունքը (ՀՀ քր. դատ. օր-ի 307-րդ հոդվածի 2-րդ մաս): Քննիչը պարտավոր է միջնորդությանը կցել, օրինակ, վկայի ցուցմունքը, ապացուցողական գործողության արձանագրությունները, արտավարության լիստի կազմակերպությունները, որոնք առնչվում են վարույթի մասնավոր մասնակցի շահերին և այլն, իսկ վարույթի մասնավոր մասնակիցը՝ իր մոտ առկա անհրաժեշտ նյութերը: Ընդ որում, նախապես նշենք, որ ցուցմունքի դատական դեպոնացման ինստիտուտի և պատշաճ ապացուցման սկզբունքի տեսանկյունից հակընդդեմ հարցման իրավունքի կրողը ոչ միայն մեղադրյալն է, այլ նաև վարույթի մյուս մասնավոր մասնակիցները (այս մասին հաջորդիվ): Այլ կերպ ասած՝ եթե, օրինակ, վկայի ցուցմունքը դեպոնացնելու միջնորդությունը ներկայացրել է մեղադրյալը, ապա նա պարտավոր է միջնորդությանը կցել բոլոր նյութերը, որոնք անհրաժեշտ են տուժողի՝ գույքային իրավունքներին առնչվող մասով հակընդդեմ հարցման իրավունքի իրականացմանը:

Քննիչը կամ վարույթի մասնավոր մասնակիցը կրում է նշված պարտականությունը բարեխիղճ կատարելու պատասխանատվությունը: Եթե հիմնական դատախազների ընթացքում պարզվի, որ ցուցմունքը դեպոնացնելու մասին միջնորդություն ներկայացրած անձը դեպոնացման ժամանակ

տիրապետել է հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման համար անհրաժեշտ նյութերի, սակայն դրանք չի կցել միջնորդությանը, ապա հակընդդեմ հարցման իրավունքի սուբյեկտը հիմնական դատալսումների ընթացքում կարող է վիճարկել դեպոնացված ցուցմունքի պատշաճությունը, առարկել դեպոնացված ցուցմունքի հրապարակումը և հակընդդեմ հարցման իրավունքի լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով պահանջել, որ դատարանում կրկին հարցաքննվի այն անձը, որի ցուցմունքները նախաքննության ընթացքում դեպոնացվել են:

Ուստի դեպոնացված ցուցմունքները հիմնական դատալսումների ընթացքում հրապարակելու և օգտագործելու հնարավորությունը չկորցնելու համար կողմերը պետք է գործեն բարեխղճորեն:

Հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման համար նյութերի տրամադրումն առնչվում է նախաքննության տվյալների պաշտպանությանը: Որպեսզի քննիչը կարողանա ապահովել մի կողմից՝ նախաքննության տվյալների գաղտնիությունը, մյուս կողմից՝ շահագրգիռ մասնակցի հակընդդեմ հարցման իրավունքը, նպատակահարմար է, հնարավորության դեպքում, վկայի, տուժողի և փորձագետի ցուցմունքների դեպոնացման միջնորդություն ներկայացնել նախաքննության ավարտին մոտ ժամանակահատվածում:

Եթե հակընդդեմ հարցման իրավունքի պատշաճ իրականացման համար անհրաժեշտ նյութերը չեն կցվել միջնորդությանը, ապա այդ նյութերը կարող են տրամադրվել դատական նիստում ցուցմունքի դեպոնացման ընթացքում՝ վարույթի մասնակիցներին տրամադրելով հակընդդեմ հարցմանը նախապատրաստվելու համար անհրաժեշտ ժամանակ:

(d) Միջնորդությունն առանց քննության թողնելը: Գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդություն ներկայացնի (հարուցի) նման իրավունք չունեցող սուբյեկտը, օրինակ՝ դատախազը, կամ միջնորդությունն ստորագրված չլինի: ՀՀ քր. դատ. օր-ի՝ ցուցմունքի դատական դեպոնացման վերաբերյալ 41-րդ գլխում սահմանված չէ, թե նման դեպքերում դատարանն ինչ որոշում պետք է կայացնի: Այս պարագայում պետք է քննարկել դեպոնացում կատարելու միջնորդության նկատմամբ ՀՀ քր. դատ. օր-ի 154-րդ հոդվածի՝ **միջնորդության հարուցման և լուծման վերաբերյալ ընդհանուր նորմերի կիրառման հարցը, որտեղ նախատեսված է նաև վերը նշված իրավիճակներում միջնորդությունն առանց**

քննության թողնելու մասին նորմ: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր-ի 154-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ միջնորդությունը թողնվում է առանց քննության, եթե այն բերել է միջնորդություն հարուցելու իրավունք չունեցող անձը, օրենքով նախատեսված դեպքերում այն հարուցվել է ոչ ժամանակին կամ ստորագրված չէ:

ՀՀ քր. դատ. օր-ի 154-րդ հոդվածի վերաբերելի դրույթը կիրառելի է վարույթի մասնավոր մասնակիցների կողմից ցուցմունքը դեպոնացնելու մասին միջնորդություն ներկայացնելու դեպքում, սակայն այն քննիչի կողմից ներկայացված միջնորդության մասով կիրառելի չէ, քանի որ ՀՀ քր. դատ. օր-ի 154-րդ հոդվածը վերաբերում է վարույթի մասնավոր մասնակիցների ներկայացրած միջնորդություններին: Վարույթի հանրային մասնակիցների մասով ՀՀ քր. դատ. օր-ի 154-րդ հոդվածը կարող է կիրառվել անալոգիայի կարգով: Այս իրավիճակում պետք է փաստել, որ առկա է օրենսդրական բաց, և եթե ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդությունը ներկայացրել է վարույթի այնպիսի հանրային մասնակից, ով նման իրավունք չունի, կամ քննիչը չի ստորագրել միջնորդությունը, ապա դատարանը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով (Իրավունքի և օրենքի անալոգիայի (համանմանության) կիրառումը) և ՀՀ քր. դատ. օր-ի 154-րդ հոդվածի 5-րդ մասով, որոշում է կայացնում միջնորդությունն առանց քննության թողնելու մասին:

(e) Միջնորդությունն ըստ տարածքային ընդդատության ներկայացնելը:

Դատական երաշխիքների վարույթներն ընդդատյա են մինչդատական վարույթն իրականացնող նախաքննության մարմնի նստավայրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, իսկ բացառիկ դեպքերում՝ նաև համապատասխան վարութային գործողության կատարման վայրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, եթե դա չի հանգեցնի վարույթի մասնակիցների իրավունքների և իրավաչափ շահերի չարդարացված սահմանափակման (ՀՀ քր. դատ. օր-ի 261-րդ հոդվածի 6-րդ մաս): Եթե ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդությունը ներկայացվել է ոչ իրավասու դատարան, ապա դատարանը պետք է մերժի միջնորդությունը (այս մասին հաջորդիվ), հակառակ դեպքում կստացվի, որ դատական երաշխիքների վարույթն իրականացվել է ոչ իրավասու դատարանի կողմից:

(գ) Միջնորդությունը մերժելը և այն բողոքարկելու հնարավորությունը: Ինչպես նշվեց, ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդությունը պետք է բովանդակի դրա անհրաժեշտության հիմնավորումները: Ընդհանուր կարգավորման համաձայն՝ դատավարական ակտը հիմնավոր է, եթե այն իր բնույթին և առաջացնող հետևանքներին համապատասխան չափով օբյեկտիվորեն համոզիչ է իր հասցեատերերի համար (ՀՀ քր. դատ. օր-ի 9-րդ հոդվածի 3-րդ մաս):

Դատարանը որոշմամբ մերժում է ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը, եթե այն հիմնավորված չէ կամ դրա հիմնավորումները համոզիչ չեն (ՀՀ քր. դատ. օր-ի 307-րդ հոդվածի 3-րդ մաս): Նշված նորմում նախատեսված է միջնորդությունը մերժելու երկու հիմք. առաջինը՝ միջնորդությունն հիմնավորված չէ, այսինքն՝ բացակայում են միջնորդության ինչպես իրավական, այնպես էլ փաստական հիմքերը, կամ ձևականորեն վկայակոչվել են ՀՀ քր. դատ. օր-ի 306-րդ հոդվածում նախատեսված իրավական հիմքերը, սակայն բացակայում են դրանք հիմնավորող փաստական տվյալները, երկրորդ՝ միջնորդությունը բովանդակում է հիմնավորումներ, սակայն դրանք համոզիչ չեն: Միջնորդության հիմնավորումները կարող են համոզիչ համարվել, եթե փաստական տվյալներն հավաստի են և դրանք ամրագրված են պատշաճ դատավարական ձևով:

Ի տարբերություն դատական երաշխիքների այլ վարույթների՝ ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդությունը մերժելու օրենսդրական հիմքերում բացակայում է միջնորդությունը ոչ իրավասու դատարան (այսինքն՝ դատական երաշխիքների վարույթի տարածքային ընդդատության կանոնների² անտեսմամբ) ներկայացնելու հանգամանքը: Այսպես՝ համապատասխան խափանման միջոց կիրառելու, ինչպես նաև կալանքի կամ տնային կալանքի ժամկետը երկարաձգելու, համապատասխան ապացուցողական գործողություն կատարելու կամ գաղտնի քննչական գործողության ժամկետը երկարաձգելու վարույթ հարուցելու, գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու քննիչի միջնորդությունները պետք է պարունակեն **իրավասու** դատարանի անվանումը (ՀՀ քր. դատ. օր-ի 285-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ, 292-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ, 295-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ): Այս նորմերում առկա «իրավա-

² ՀՀ քր. դատ. օր-ի 261-րդ հոդվածի 6-րդ մաս:

սու դատարանի անվանում» հասկացությունը պետք է մեկնաբանել ոչ միայն ձևական (դատարանի անվանումը գրված լինելու տեսանկյունից), այլ նաև այն պետք է դիտարկել ընդդատության կանոնների հետ համակցված: Նման մեկնաբանության արդյունքում ստացվում է, որ եթե միջնորդությամբ իրավասու դատարանը որոշելիս ՀՀ քր. դատ. օր-ի 261-րդ հոդվածի 6-րդ մասի (տարածքային ընդդատության) պահանջները չի պահպանել, ապա դատարանը, ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 285-րդ հոդվածի 9-րդ մասով, 292-րդ հոդվածի 11-րդ մասով, 295-րդ հոդվածի 7-րդ մասով, որոշում է կայացնում վարույթի հարուցումը մերժելու մասին:

Ինչպես նշվեց, ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդությունը մերժելու հիմքերի ցանկում ոչ իրավասու դատարան միջնորդություն ներկայացնելու հիմքը նախատեսված չէ, ուստի նման դեպքում դատարանը, կախված նրանից, թե այս վիճակը կորակի օրենսդրական բաց, թե Օրենսդրի գիտակցված լուրջություն, պետք է հիմք ընդունի *extra legem* կամ *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը³ և որոշում կայացնի միջնորդությունը մերժելու մասին:

ՀՀ քր. դատ. օր-ի 389-րդ հոդվածի 1-ին մասում ուղիղ սահմանված է, որ վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման ենթակա են ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի դատական ակտը:

(գ) Միջնորդությունը կրկին ներկայացնելը: Ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը մերժելու դեպքում նույն միջնորդության ներկայացումը թույլատրվում է, եթե դեպոնացումը հիմնավորելու համար բերվում են նոր էական փաստարկներ (ՀՀ քր. դատ. օր-ի 307-րդ հոդվածի 4-րդ մաս): Այս նորմի հիմքում ընկած է այն ընդհանուր մոտեցումը՝ ըստ որի վարույթի նույն փուլում կամ վարույթն իրականացնող նույն մարմնի առջև կրկին հարուցված միջնորդությունը քննության է առնվում, եթե այն հիմնավորելու համար բերվում են նոր էական փաստարկներ (ՀՀ քր. դատ. օր-ի 154-րդ հոդվածի 7-րդ մաս):

ՀՀ քր. դատ. օր-ի 307-րդ հոդվածի 4-րդ մասում թեև խոսվում է ցուցմունքի դեպոնացում կատարելու «նույն» միջնորդության մասին, սակայն

³ Այս մասին տե՛ս **Ղամբարյան Ա.**, ՀՀ քրեական դատավարության իրավունքի զարգացումը Օրենսգրքին հակառակ (*contra legem*) // ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2022, № 1 (105), էջեր 19-70:

ինքնին հասկանալի է, որ միջնորդությունը մերժելուց հետո ներկայացվում է ոչ թե *նույն* միջնորդությունը, այլ կրկին ներկայացվում է նույն անձի ցուցմունքը դեպոնացնելու միջնորդություն: Կրկին ներկայացված միջնորդությունը, նախկին միջնորդության համեմատությամբ, բովանդակում է նոր և էական փաստարկներ:

Քննարկվող ինստիտուտի շրջանակներում *նոր փաստարկները* պետք է տարբերել *նոր հանգամանքներից* (տե՛ս օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր-ի 121-րդ հոդվածի 1-ին մաս): Փաստարկը որևէ բան ապացուցելու կամ հերքելու համար բերվող հիմնավորումներն են, պատճառաբանություններն են, փաստերն են⁴: Նոր փաստարկներ կառուցվում են ինչպես նոր հանգամանքների, այնպես էլ եղած հանգամանքների վերաբերյալ նոր տվյալների ներկայացմամբ:

Փաստարկները համարվում են *նոր*, եթե կրկին ներկայացված միջնորդության մեջ քննիչը՝

1) փոխում է նույն անձի ցուցմունքը դեպոնացնելու իրավական հիմքը, օրինակ՝ առաջին անգամ նշել է դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու հիմքը, իսկ երկրորդ անգամ՝ դատաքննության ընթացքում իրավաչափորեն ցուցմունք չտալու հիմքը⁵.

2) նույն իրավական հիմքերի շրջանակում ներկայացնում է նոր բնույթի հանգամանքներ, որոնք նախկինում նրան հայտնի չեն եղել, օրինակ՝ քննիչը վկայի՝ դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու ենթադրությունն առաջին անգամ հիմնավորել է նրա առողջական վիճակով, սակայն միջնորդությունը մերժելուց հետո ի հայտ է եկել վկայի՝ երկրից մեկնելու մասին հանգամանքը.

3) նույնաբնույթ հանգամանքը հիմնավորում է նոր աղբյուրից ստացված փաստական տվյալներով, օրինակ՝ վկայի՝ երկրից մեկնելու ենթադրությունն առաջին անգամ հիմնավորել է վկայի ցուցմունքներով, սակայն

⁴ Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Եր.: 1976, էջ 1514:

⁵ Ընդ որում, ընթերցողի հետ պայմանավորավելու դեպքում՝ նույն անձի ցուցմունքի դեպոնացում կատարելու վերաբերյալ նոր իրավական հիմքով ներկայացված միջնորդությունը կարող է համարվել ոչ թե կրկնակի ներկայացված միջնորդություն, այլ որակապես նոր միջնորդություն:

կրկին ներկայացված միջնորդության մեջ բերվում է նոր տվյալ՝ օդանավի տոմս ձեռք բերելու մասին:

Կրկին ներկայացված միջնորդության փաստաթղթերը պետք է լինեն ոչ միայն *նոր*, այլ նաև *էական*, այսինքն՝ վերաբերելի լինեն ցուցմունքի դեպոնացում կատարելու հիմքերին, ինչպես նաև նախորդ միջնորդությունը մերժելու պայմաններում դատավորի դիրքորոշման փոփոխության տեսանկյունից ունենան կարևոր նշանակություն:

Եթե ցուցմունքի դեպոնացում կատարելու կրկին ներկայացված միջնորդությունը չի բովանդակում նոր կամ էական փաստաթղթեր, ապա այն պետք է թողնել առանց քննության (ՀՀ քր. դատ. օր-ի 154-րդ հոդվածի 7-րդ մաս):

ХОДАТАЙСТВО ОСУЩЕСТВЛЕНИЯ СУДЕБНОГО ДЕПОНИРОВАНИЯ ПОКАЗАНИЯ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

